

891.99

Q-29

E. 220000


2 2 13

2 7 5

1994.1.10. 10.10.10

1994.1.10.10.10

A. 10000



1994.1.10.10.10

1994.1.10.10.10

12 MAR 2011

150m

135

Ա. ՋԱՆՅԱՆ

891.99

Ջ-20

uz

ԲԱՑԻՈՂ ԾԱՂԻԿՆԵՐ

1001
3549

РАСПУСТИВШІЯСЯ ЦВѢТЫ

А. ДЖАНЯНЬ.



ԲԱԳՈՒ
Տպարան «ՏՐՈՒԳ»
1908 թ.

БАКУ
ТИПОГ. „ТРУДЪ“
1908 г.

23 .07. 2019

Ի՞նչ պատմեմ, եւ ոչինչ.—բայց լռեմ ի՞նչ կատեն
Երբ ինձ տեղ կոտս-կոպիտ ժայռերը կը խօսեն.
Ի՞նչ պատմեմ,—ցա՛ւ, կսկիծ, բիրտ կեանքի գոյութիւն
Լեղի հաց, եւ անվերջ բուստի պատմութիւն...

Խօսք իմ մայրենի, խօսք իմ վեհացած
 Ինչո՞ւ սրտիս մէջ քո մարտը հոգին
 էլ չէ արծարծում

Ի՞նչն է խեղտում քեզ.
 Յոռետեսութեան այն մուսլ հոգին
 Որ ջերմ սիրոյ հետ և ատել գիտէր
 Թէ՛ մութ խաւարը,

Որ տանջանքի հետ համոզեց ընդմիշտ,
 Թէ երջանկութիւնն անկարէլի է.
 Որ թաց գետնի վրայ սողացող մարդը
 Չէ կարող թռչել առանց թևերի,
 Եւ աղատն ու վեհ, բարին, գեղեցիկ՝
 Նրա կրքերին չեն կարող տիրել
 Ու համոզելու՝

Թէ ճշմարտութիւնն ինքը Աստուածն է.
 Խօսք իմ նետահար, ինչը խոցեց քեզ,
 Տիեզերական այն խորունկ վիշտը
 Որ բարձրութիւններ նուաճել գիտէ,
 Եւ որի ծոցում՝

Մարդը կարող է վեհանալ ընդմիշտ
 Թէ՛ գոռ չարիքը.

Կամ բիրտ անբոխի էն յիմար ծանրը
 Որին մի ժպտով նուաճել գիտես,
 Սակայն ով լինի՝

Ե՛լ և աղմբկիր մութ տարածութիւնն
 Իմ արծիւ բալայ,

Դու գործ ունիս դեռ
 Հնչի՛ր, խօսա՛ւ...

Ասում են մեծ ես,
Թէ որքան է ճիշտ՝ ես այդ չ'զիտեմ,
Միայն պատմել են՝

Որ քար սրտերը, յաղթ հարւածներով,
Փշրել ես մի օր.

Բեղուն, սուր ոճով խայթել ես նրանց,
Ու կեանքի համար մարդիք պատրաստել
Դու բարձր ես կանգնած:

Վեհացած մտքով ու ճախրդ հպարտ,
Դու զինւած մենակ քո խենթ արարքով
Գործի դուրս եկար.

Ու մեզմ սուրալով քո անուշ լեզուն,
Ստրուկ, ցած մարդուն անկախ հուշակեց
Դու մեծ ես ծնւած:

Եւ ազատն ու վեհ առած քո թեկին,
Մեծ անձանութով քո միտքը յղի՝
Վսեմն ու բարին ուսուցիր մարդկանց.
Եւ այդ մեծ կուռում
Կեանքի բարձրերը նուաճել սկսեց

Քո սուր տապալը,

Ու մարդուն տիղմից զատել աշխատեց
Վեհ է քո գործը...

Հ Ե Ռ Ո Ւ Ն Ե Ր Ո Ւ Մ

Այնտեղ էլ կեանք կայ, և որքան հեռու՝ այնքան և սիրուն:
Թարմ ծաղիկների բոյբը իմ շրթին, ազատ մտքերի դաշտն
է իմ առաջ.

Խենթ արկածների ծնունդ եմ վաղուց, ու գալիք կուրի
յոյսն եմ աւետում:

Նախկին հոգիներն իրանց թռչչելով, ինձանից առաջ չեն
սահել այնտեղ.

Կնյս է այդ հեռուն, և որովհետև անձանութ է ինձ՝ մեծ է
ուրեմն.

Ազատ արծիւը չէ ճախրել այնտեղ, և լալկան տոնը մարդ-
կային մտքի, չէ հնչել բնաւ:

Թախիծի դաշտն է, ուր հոգիները մեղմիկ լալիս են՝ իրանց
խոր վէրքի ամորման համար.

Եւ տառապանքի անհունութեան հետ, տանջանքն է այն-
տեղ.

Վշտի թերթերով իմ արցունքները շող կը տամ օդում,
ու լոյսը կերգեմ.

Եւ տիեզերքի օրորանքի հետ՝ թարմ հեռուների երգն է
իմ լեզուն:

Առասպել մտքի վեհութիւնն ունիմ, որտեղ զգալը շատ
բաներ արժէ

Ու մեծ տարածքը նեղ է թւում ինձ, որտեղ ամբողջը՝ իւր
ցաւերն ունի, ո՛ր եմ գնում ես.

Արդեօք, բնութեան շնչն է ինձ զիւթել, թէ՛ դեպի ան-
հուն ձգտելու տենչը.

Խոր ծալք կայ ճակտիս, ի՞նչ եմ ուզում ես
 Այն վեհ երազներն քամիների հետ որ ինձ տանում են,
 խօ չե՞ն ձգելու
 Իսկ եթէ ձգեն սրտեղ, սր չօլում
 —Անապատի մէջ, թէ հեռուներում՝ կեանքն է մեզ ընկեր,
 մենակ չէ միտքը...



ԿՈՂԱԿԱԵՐԳ



Սարը ելանք, բոխ քաղելով ցած իջանք
 Լալ ծաղկունանց կարմիր տեսքը դիտելով,
 Քամին փչեց խաչ քարերէն վեր ելանք
 Դու կանգնեցիր մէջքիդ ծոպը կապելով:
 Ասիր Սրազ, հաջողիս մէջ զոխ չկայ
 Մէկ էլ կը դամ արուն տեսքդ չեմ նայի,
 Իմ սիրածի ստը երբէք սոթ չտայ
 Թէ չէ գարնան էլ կարոտդ չեմ քաշի:
 Դու ասացիր որ ո՛վ գիտէ, սաղ, մեռած
 Սրազ մէկ էլ քու սև ափը ես ընկնեմ.
 Կրակ կանեմ զոխ-բոխերով քուն մտած
 Ամա վախիր թուխ չորանիտ որս չանեմ...

Ու բալաներս եկան գնացին
 Սև թուխպ շալակած մուր, գլխիկոր,
 Խեղճ գաւակներս եկան գնացին
 Մեծ լեռը շալկած ինչպէս դարդի ծով:
 Անմիտ ցնորքով ինձնէն դուրս թռան
 Կեանքում շնչելու նախշուն փափագով,
 Զահիլ բալաներս հպարտ գուգւեցան
 Ու ճամփի կիսում ընկան վիրաւոր:
 Կեանքի դաւերին անձանօթ բայէք
 Ընկեր թօրունով եկան գնացին,
 Քարուն յոյսերի եմ տարւած խօխէք
 Վարար սելի պէս եկան գնացին...

Խոր տեղերէն արունքն առատ կհոսի
 Կեանքի ցաւը գլխիցս առատ վար կուգայ,
 Էս մեծ դարդը սև օրւան մէջ կը մթնի
 Պա իմ ցաւը, աշխարհն առած սըր կերթայ:
 Մամուռն եկաւ ցոփ դարկելով քուն մտաւ
 Սաղ տեղ չկայ, անցած յուսով կը մխամ,
 Արեն էլ խորթ մեծ քարափէն թափ առաւ:
 Պա իմ սիրտը, նրա մահը երբ կը լամ:

Ասացի էսօր իմ մօտ կը գաս դու
 Խաղ կանես հետս ու ջուր կը տաս ինձ,
 Անցեալ յուշերը կերգես նորից դու
 Ճանկ կանես սիրտս ու խափ կը տաս ինձ:
 Բարձեքը ասի կառնես նորից նոր
 Ամեն ինչ խառնակ նետես տակաւին,
 Բարակ ծկտոց աղմուկ և ժխոր
 Ու հին վէրքերս նորես վերստին:
 Սկզբից ասի դու ջուր շաղ կը տաս
 Զահիլ ոտ-գլուխ թըջոց կը գնես,
 Ու յետոյ ինձպէս եղնիկ կը դառնաս
 Խիտ անտառի մէջ անհետ կը կորչես...



էդ հպարտ կրծքիդ երկինքն է նստած
 Մութ արշալուսի իմ լուսնոտ փէրի,
 Տաք ու պողպատէ համբոյրն ես բռնած
 Խնր խռովքի հետ այ անտէր բաջի:
 Ջինջ երեկոյի շողերն է դէմքիդ
 Լուսով մայր մտնող իմ անհաշտ արև,
 Կիրք ու խոհերի արցունքն է ճակտիդ
 Գարնան արցունքով իմ ցողած տերև:
 Սէր ու բերկրանքի անօթ հս բռնած
 Ցաւ ու հոգսի դէմ ելել խենթ կուռի,
 Կեանքի ծանրութեամբ գաղտնիք ես շալկած
 Ու վիշտ ես լալիս այ իմ խո՛րթ ազի...

Ատում ես որ միշտ անպէտք եմ լալիս
 Ա՛խ ու վաշերից մի բան չի դուրս գայ,
 Իզուր խօսքերս քամուն եմ տալիս
 Աշխարհը դարձեալ իր տեղ կը մնայ:
 Լէն ու պատրաստի ճամբայ չ'կայ մեզ
 Ո՛վ եկաւ գնաց էսպէս պիտ տանջւի,
 Կեանքի գաղտնիքը մեկնող չ'կայ մեզ
 Գիփ էլ էս օրին էստէղ պիտ ընկնի...

Հէրու էս օրին սեւ կար քո կրծքիդ
 Իսկ յիմա գլխիդ կարմիր ես ձգել,
 Ու էն ժամանակ թախիժ կար դէմքիդ
 Իսկ այսօր անա ծիծաղ ես հագել:
 Խնչ էր այդ առաջ և ի՞նչ է այժմ—
 Մի փոփոխութեան դժւար մեկնելի,
 Եւ եթէ առաջ այդպէս լինէիր
 Միթէ իմ սիրուն քեզ մօտ կը գայի:

Նախշուն երազըս սիրտ արաւ մի օր
 Քորիկ ու հիւանդ թուաւ դեպի քեզ,
 Կեանքի գարպատում թողեց ինձ մենակ
 Փռուց բալիկս եկաւ դեպի քեզ:
 Գողարիկ հէքիաթըս սիրտ արաւ հանկարծ
 Եկաւ շեշտակի քո մէջ մարմնացաւ,
 Ախ ինչ ցաւոտ էր, ինչպէս համողւած
 էն նետդ սրտիս որ խեթ գամեցաւ:
 Անհոգ օրերս սեւ հագաւ նորից
 Ջինջ աղբուրի պէս ցնորքս հանգաւ,
 Գարուն երգերս ընկան իմ մտքից
 Լալ ու զմրուխտեայ երազըս մարաւ:

Անտառի փէրին իմ տունն էր իջել
 Չաղով, շափաղով, նստել իմ կողքին,
 Ջինջ հայելու մէջ իր շողքն էր պցել
 Եւ երգ էր ասում, խօսում իմ փէրին:
 Հասուն կրծքի մէջ անհանգիստ, սիրուն
 Ողջ սիրտն էր գրել ինչպէս վառ կրակ,
 Ախ ինչ նման էր ամրան Աստըծուն
 Որ վիշտ չէ սիրում և ոչ պաղ դիակ:
 Նազան թիկունքին վարսերը արձակ
 էս անուշ տապի ծիծաղը շրթին,
 Ամբողջ հայեացքում սուր նետ մի համակ
 Ու սիրա չէր անում խայթել ինձ փէրին:
 Անտառի փէրին իմ գիրկն էլ իջել
 Ու սև դանակը խրել իմ սրտին,
 Ցաւի հեզնութեամբ իմ ներսն էր մտել,
 Եւ երգ էր ասում, խօսում իմ փէրին:

Դու տեսել ես վիրաւորած գեղեցկութիւնը
 Դու լացել ես այն գաղտնի սէրը քո մէջ,
 Նրա արցունքը իբրև ցող՝ ընդունել ես այտերիդ վրայ
 Այն գլուխը առել ես կրծքիդ մէջ:
 Արցունքի հետ դու լսել ես այն հեկեկոցը
 Որ՝ գիշերայ սրինգն է յիշեցնում լեռներում,
 Հոսող գետակի մրմունջը լսել ես
 Եւ բոց այտը առել ես քո շրթին:


Ու գրկել ես այն փափուկ մէջքը
 Որի գոտին ծիածանն է յիշեցնում,
 Եւ յոգնաց գլուխդ ասած, թաղել ես
 Երբեկիցէ նրա յամբ գրկում...

Մե ցաւը զգոյշ եմ կեանքը հեծաւ
 Մեծ թամբը դրեց, նստեց, ու գնաց,
 Թագնւած յոյգերիս փականքը եղաւ
 Մտքիս թռիչքը խեղտեց ու գնաց:

Գողպատ դանակով սիրտըս կտրտեց
 Մեծ ճանապարհին ձգեց ու գնաց,
 Կեանքի գաղտնիքը իմ վիշտը դարձրեց
 էս սև յորանջը թողեց ու գնաց:


Նիհար եզներով ես արտ կը գնամ
 Եւ ճակտիս քրտինք, և ուսիս արօր,
 Չփլախ քիւլփաթիս ապրուստ կը հողամ
 Եւ գործիս զվաթ կը տայ նա հօր:
 Առանց յոգնելու անվերջ կ'հերկեմ
 Եւ սիրուց զրգւած, և գործըս արդար,
 Իմ ոսկի արտը սերմով կը լցնեմ
 Եւ հաց կը դատեմ արնով շարաչար:

Կարմիր եզներով ես արտ կը վարեմ
Եւ շուրջըս մթին, և ձիւնը սառոյց,
Ու իմ քրտինքի շիթով կը ջրեմ
Նաչար բալէքիս ապրելու սիրուց...




Անտ

Դու լացեցիր երբ սը տեսար, խաղով ընկած վաղ կուտամ
Փէտը բռնած անուշ դողով, ձեռք դեպ ինձ մեկնեցիր,
Կեանքի ճամբում ոտս սայթեց, մէջքս ամուր ցաւ տուաւ
Ու եդ ոխդ քամուն տալով, վերքս ցաւով կապեցիր.
Դու ասացիր, եթիմ բալէն մօրը պիտի լաց չը տայ
Խելօք լինի նամուս կանի, պարսպ խաղով չի ընկնիլ,
Հօրից յետոյ իրան թողած օջաղը վառ կպահի
Որ աշխարհում կապը կտրած, մի անպէտք մարդ չդառնայ.
Գեղի միջում ասացիր որ առաջինը պիտ լինես
Լաւ կարգալով՝ լաւ պահես քեզ, որ ընկերքդ նախանձնն,
Մարդկանց միջում ասիր օղուլ, քիթը բռնած չեն խօսի
Եա թէ էնպէս մեծ բան արտ սը ամենքը քեզ գովին.
Ասի մերիկ, մէկ-մէկ էլ թող ընկերներս հետ խաղամ
ձիւպտան իսկոյն մէջքիս վրայ, կապոյտ գլծը վեր թողաւ,
Ու լացեցիր ինքդ փոշման, օղուլ, ասիր էրւած եմ
Ձեռքդ կոտրէր, պա մին մօր սիրտ էսքան կարծր քմը կլինի
Ու խրատներդ էն օրւանից մէրիկ ինձ հետ անմաս են
Հողիդ էլ պինդ գրկիս սեղմած սև ցաւերով տարւած եմ.



Ցաւերի հետ էսպէս մէկտեղ, մեծ ճամբէքով մենք անցանք
Դու յոգնեցիր ու արտի մէջ, սաղը աղատ մեկնեցիր,
Ծառի վրէն ճուղքը երգեց, քամին անուշ սլալաց
Ու ես տամուկ քո ճակատին թաշկինակըս կապեցի,
Եւ քնեցինք աստղերի հետ, դու ինձ ընկեր ասացիր
Անուշ աչքիդ քունը շոյեց, շալըս վրէկ գցեցի,
Ու հեռուէն շունը հաջեց, սիրտս կամաց թրպրտաց
Վրայ պրծայ մէկ էլ տեսնէմ դու երազում խօսեցիր.
—Ասիր աղջի, սիրտըս խորշակ, կեանքս անտէր ու լքւած
Չոր-չտլերով տուն եմ գալիս ամա գիտեմ չեմ հասնի,
Մուրազատու սուրբ Գէորգի փէշը բռնած եմ խօսում
Մէկ է ինձ հետ, թէ էս ախպօր, ձեռը դու եք մի մերժի...
Ու լացեցի, և սրտիս մէջ ծիտը անուշ ճթճթաց
Վերից փչեց սառը քամին, ես քեզ վեր կաց ասացի,
Եւ նայեցինք իրար վրայ, դու ինձ սիրով գրկեցիր
Աչերիդ մէջ կեանքը փայլեց, և միասին երգեցինք:
Ու Աստուծով էլ չե՛նք յոգնի,
Իրար հետ, միշտ առանձին, մենք իրար սիրել ենք...

1001
6186
3549



Եւ ես լաց եղայ...
Պղտոր, արիւնոտ հեղեղի նման,
Արցունքի խոշոր կաթիլներն յորդ՝
Իմ սև աչերից թափուցին ներքև.
Եւ ես լաց եղայ միայնակ և լուռ,
Եւ ես յուզեցի, ու արտասուցի
Եւ դեռ լալիս եմ:

Եւ տեսայ ինչպէս կարկաշտով արագ,
Արցունքներն առատ վաղեցին հեռու
Ուր այնքան երազ անցեալի մեջին,
Սիրոյ ապուրից կերանք ես և դու.
Եւ երբ՝ երգեցինք սուրբ լուսածագին
Առաջին անգամ
Դու ոտքի ելար, և ես լաց եղայ
Քաժանումն էր այդ:

Սակայն և այսօր,
Կանգնած հինավուրց առվակի ափին
Ուր լութեան մէջ՝
Մեր ազատ սիրոյ արցունքը հոսեց
Ես դեռ լալիս եմ.
Քայց դ՞ու, քնքոյչ դե!
Փոխանակ ինձ հետ սէրդ ողբալու,
Դու դեռ խնդում ես
Դու ինձ ծաղրում ես...

Վշտի ու ցաւի մշուշը ճակատիս
Կեանքի իղձերին անխօս փարւեցի,
Հանգած արցունքի հեղեղը կըծքիս
Ծով դարդերիս հետ մենակ մնացի:

Ապշած դրութեամբ մեխած թողեցին
Մոլար ճամբէքում անմէր ու անսէր,
Անսիրտ կսկիծով ընդմիշտ թաղեցին
Կեանքի գրի մէջ—ես վաղ եմ հանգեր...

Արագի ափին եղէգն էր աճել
Ու շուրջը խմբել վարսակ, լորենի,
Մտքի ոստայնում ուղեղս էր թառել
Ու կեանքս ձգել բաժին քրմերի:

Արագի ափին մի ձայն զընդաց
Սիրտըս աներկբայ արձագանք տուեց,
Սարի հովի պէս իմ կեանքը հևաց
Արագը սակայն կամաց ճղոպրեց:

Երկինքն ուժգին ծփանք տուեց
ձուրք ու ծիծեռ ճվվացին,
Արեւըրում մի գիծ փայլեց
Ու ծառերը խշշացին:

Անձրևները կաթիլ-կաթիլ
Տող թափեցին դուրեկան,

Ու մթան մէջ և վարդ ու ծիւ
 Ղրթիս վրայ հպեցան:

Տիեզերքն էլ մի շունչ դառած
 Ունկընդիր էր այդ ժամին,
 Ու յոնքերը խոժոռ կիտած
 Հեկեկում էր դառնազին:



Լուսնեակ գիշերին միտքս համակուեց
 Տիեզերական մի խորունկ վշտով,
 Հպարտ քրծքիցս ամեն ինչ կորզուեց
 Մնացի մենակ ես ինձ երգելով:

Ու թախծոտ երգիս մոգեուն ելե՛ջ
 Տարածութեան մէջ հալեցա՛ւ, հանգա՛ւ,
 Ինչպէս մի հիւլէ իմ կեանքի վսեմ
 Սիրունուս ձայնին ունկընդիր եղաւ:



Եթէ բարձրի վեհութիւնը չքնադադէմ
 Կուտի սիրով անզօր լինի ինձ գրաւել,
 Եւ երբ մարդը բահը ձեռին ու տխրադէմ
 Խղճի մտօք պատրասուէ ինձ շիրիմ փորել:

Եւ երբ կեանքի ճառագայթը անհետանայ
 Ժամանակը վիշապի պէս գայ մեղ կլի,
 Ու մութին մէջ գոռ չարիքը յղիանայ
 Գեղեցկութիւնն ասացէք որ ահ չի մեռնի՛ր...



Գերեզմանըս կը լինի ծովի խոր յատակում,
 Անմոռաց յիշատակ դու կըմնաս իմ սրտում.
 Իմ սրտում, իմ սրտում, որ անվերջ կըմխայ
 Ով այնտեղ թափանցէ քո անուն կը կարդայ.
 Ոսկեղէն տառերով դրոշմած կը տեսնի,
 Պանծալի մի անուն և քեզնից կը փախչի.
 Այդ անուն կը կնքեմ ճակատիդ թող կարդայ
 Ամեն մի ազնիւ մարդ սոսկալ՛ով խաբերայ...



Ոգևորութիւնս սառաւ ասում են
 Էլ չեմ արտադրի զգացած խօսքեր,
 Խինդ ու եռ իջան հոգուս լարերէն
 Էլ չեն լուելու մեղանոյչ տաղեր:
 Հորտան ու մորոտ անցան սարերից
 Մարալ ու եզներ եկան գնացին,
 Ծաղկունք ու ծիծառ ընկան զեփիւռից
 Իմ երգն էլ կը գայ իր խօսքը բերնին:

Սարեր ու ձորեր զեռ մով են հազած
 Սիրտս էլ ցաւի հետ փունջ ծաղիկ ունի,
 Բացւած ու կոկոն թէկուզ հէնց խամրած
 Միթէ ամեն կեանք իւր միտքը չունի:



Գեղեցկութան յոյզն է նստել քո դէմքին
 Աստուածն անեղ այնտեղ ցնորք է զրել,
 Տաք համբուրի կարմիր հետքն է քո շրթին
 Մով կանաչի զմրուխտ ալն ես դու հազել:
 Գաղտնիքների ծիրանին է քո ուսին
 Մունջ սրտիդ մէջ խորհուրդներ ես թագցնում,
 Ու նայելով գեղահրաշ քո դէմքին
 Աստուածները պար են բռնում երկնքում:
 Եւ գերում ես, և նազում ես սիգածէմ
 Քնքոյչ սեռի վէս ճակատը քո ուսիդ,
 Ու ջինջ սրտեր զրահ հազած վճռադէմ
 Նահանջում են երբ բաղխում են քո սրիդ:



ՅՈՅՁԵՐ ՈՒ ՏԵՆՁԵՐ

Վեհ ու չքնաղ, վեհ ու հպարտ
 Կեանքիս սիրուն իմ երազ,
 Լուռ ու թախծոտ, վիշտ ու արցունք
 Սրտիս գարուն իմ երազ,
 Հոգի ու միտք, և տենչ ու յոյզ
 Գու ես յանկարծ աղմըկում,
 Եւ մութ բարձրում մարդկանցից վեր
 Երգ ես հիւսում իմ երազ...



Երբ գիշերը խռովայոյզ կիջնի իմ դէմ
 Եւ երգերս գեղեցկահիւս փոշիանան,
 Երբ երազներս իրենց տեսքով չքնաղաղէմ
 Վիշտս առած դեպի կեանքը վերադառնան:

Երբ յոյզերս տարածքի մէջ էլ չի պարտկի
 Միտքը առած դեպի բարձրը շողիանան,
 Եւ արցունքս որ խեղճ մարդկանց սրտէն պիտի
 Ցաւը գրկած իմ անցեալի մէջը դառնան:

Յայնժամ գիտցէք որ թախիծը տիեզերքի
 Գեղեցկահիւս իմ երգերի բովէն ելած,
 Չքնաղագեղ պարտիզի մէջ նման կուսի
 Ձեր տանջանքը իմինիս հետ ունի գրկած:



Երբ երազներս իմ յուշ կեանքի շողիանան
 Եւ ցաւերս ինչպէս տարափ իջնի իմ դէմ,
 Երբ կոպերըս իրենց բնում տամուկանան
 Եւ ամբոխը սեւաֆի պէս վաղի իմ դէմ:

Երբ գեղեցիկն էս աշխարհում էլ չի ապրի
 Նազելուս պէս ցնորք լինի եթերացած,
 Եւ գիշերը ցերեկի հետ էլ չի փոխի
 Գահիճի պէս կեանքս լինի ձեռքում բռնած:

Այն ժամանակ թող իմ սիրտը կրծքէս հանի
 Անըջապատ երազներուս չքնաղ խուրձէն,
 Ու ճօճելով վայրագ Ասածու առաջ ձգի
 Ինչպէս բողոք նոճիներու անզարդ շիրմէն:



Կուգեմ օդի մէջ իմ բունը տեսնել
 Ու արծիւ լինել թխպոտ լեռների,
 Ճիրաններիս մէջ մարդկանց պինդ սղմել
 Ու տանել ինձ հետ գահոյքն աստղերի:
 Մասիսի փէշին գոհիս կը ճղմեմ
 Ու ձայնը տաղաուկ կտամ ցուրտ հովին,
 Սառած բարձունքից գէպ ցած կը նայեմ
 Եւ կեանքիս զեկը կը տամ իմ թելին:

Աղատ տարածքը կանոնեմ ես իմ մէջ
 Եւ ճախրս հպարտ, և մարդը անշունչ,
 Բաց անորոշում կը գնամ մինչև վերջ
 Եւ ձիւնը գահույք, և շնորհըս սառոյց:
 Ու վէս բարձունքում ինքնատիւ կերպեմ
 Մռայլ, ահաւոր, ու հոօր տոնով,
 Երկինք երկրի մէջ միջնորդ կը կանգնեմ
 Մշուշ տարածքում արծիւ դառնալով...



Չմրուխտ կանաչով դուգում ես դաշտերն
 Անուշ դայլայլով լցնում սար ու ձոր,
 Ա՛խ, թէ չոր հացը քեզ շատ չը նեղէր
 Եւ դու ապրէիր անհոգ, մենաւոր:
 Հալալ քրտինքով հզան հետ դատած
 Քու կալ ու կուտին սև աչք շանկէր,
 Եւ կու ու բէգար մի կողմը թողած
 Էդ չոր պատառից անարգ կշտացէր:
 Չարքաշ բեռի տակ քո մէջքը ծուած
 Խորունկ վշտի հետ կպել ես գետին,
 Օ՛, թէ մեծ բարձրում չլինէր մի Ասուած
 Եւ պարարտ հողին փարէր քո հողին...
 Մարունը աշխատանքն վեհութեամբ լցած
 Քո մէջ պարուրած տանէր քեզ հեռուն.
 Ու այդ մեծ կուում քո միտքը տարած

Բաց անորոշը գրկէր քո հողուն:
 Եւ ես պարծանքով իմ խեղճ ժողովուրդ
 Մեծ գլխիդ վերև հպարտ փաթ տայի,
 Ու պողպատ խօսքով առանց յոգնելու
 Խենթ արարքներդ լացով պատմէի...



Հաշտենք իմ փոքրիկ, իմ խարխուլ տնակ
 Հաշտենք միասին,
 Պայմաններն են այդ որ ոյժ են ալիս
 Անարգ կարկըին:
 Կեանքի գոռ կուի իմ խեղճ օթեան
 Անարգ ու դժնեայ,
 Իւր սև պալքարն է յարատև փոփոխ
 Կախել մեզ վերայ:
 Ու այդ տաք կուում ցաւից տապակած
 Անընկեր ու խեղճ,
 Ատուած շատերից իմ խոնաւ սենեակ
 Ընկել եմ քո մէջ:
 Չարժումն է այդպէս յարաճուն յիմար
 Դառնում պժգալի,
 Օ՛, աններկ յատակ, բորբանած պատեր
 Ինչէր չէք պատմի:
 Իմ սրտի նման դո՛ւք էլ կասէք որ
 Արև չէք տեսել,

Էն մեծ շէնքերի մուայլ շարում
 Տանջւել էք մեռել:
 Երկինքն էլ մենակ բարձրերն է դիտում
 Յուրն աստղերով,
 Իսկ մեր սիրտն անտես, մեր սիրտը կրակ
 Խրճիթ մենաւոր...



Էն սև ու անտաշ քարը թող շուռ գայ
 Յուն էլ սրտիս հետ ինձ տակով անի,
 Լուռ ու ծանրախոհ նստի իմ վերայ
 Ճանկ անի գէմքիս իմ կեանքը տանի:

Էն մեծ ու հպարտ սարը թող փուլ գայ
 Օրով, արևով, իմ լոյսը խլի,
 Մարդկանց անէծքից իժը թող դուրս գայ
 Խոր ու գաղտնապահ իմ սիրտը խայթի:

Էն բիրտ ու կոպիտ կեանքը թող դառնայ
 Սև քաջքերի բուն իմ աչքը հանի,
 Ու թաք էգ բանը մէջըս իմանայ
 Եօթ սարերից դէն ինձ դեղ կը դրկի...



Անթիւ կռիւներ մենակ վարեցի
 Կաղմածքս ամուր ճակատըս հպարտ,
 Խանձած դաշտերում ջահիլ մարեցի
 Կրունկըս մաշուած հարւածս պողպատ:

Ու կեանքի կռիւն իմ կուրծքը արւի
 Յաղթւած, վիրաւոր, քո գիրկը եկայ,
 Ծով տառապանքիս արցունքը սրբի
 Խենթ արարքներս լացի, ու եկայ...



Եւ գլխիս վրայ փաթ տուա ագռան
 Սև բախտիս վրայ դռուաց ու գնաց,
 Մերկ կրծքիս վրայ իջաւ սև ագռան
 Ու կեանքիս ցաւը լացեց ու գնաց:

Կտուցը կացին դարկեց տրտմագին
 Բաց աչքս հանեց թողեց ու գնաց,
 Ազիդ մէրիկիս անթաղ բալիկի
 Սև լէշը քրքրեց լափեց ու գնաց:

Անողորմ ճանկով սիրտըս դուրս քաշեց
 Բիրտ ագահութեամբ ցրեց ու գնաց,
 Մահւան ինձոյքում լեզուս պատառեց
 Կեանքիս արևը ծաղրեց ու գնաց:



Գնում եմ ուղիղ զեպի բարձրութիւն
 Եւ ձեռքիս գրիչ, և ձեռքիս պողպատ,
 Ուր կայ լոյսի շող, օդի մաքրութիւն
 Եւ կամքով ուժեղ, և հոգիս հպարտ:

Դէպ այդ անսահման եթերն եմ ձգում
 Ուր խոժոռ փայլով ամպերն են կլտուել,
 Հսկա տարեբքը այն մեծ բնութեան
 Որոնց հոգու մէջ իմ հետքն եմ տեսել:



Էն սարի լանջին ճրագ էր վառում
 Իսկ գլխիս կայծակն պէծին էր տալիս,
 Սև սարի կրծքին գնացքն էր մեխում
 Ու վերև երկինքն մեղմիկ էր լալիս:

Էն սարի գլխին սև ամպ էր նստել
 Բուքն էլ կատաղի ճայթում մեր գլխին,
 Մեծ սարի ետև արևն էր թագնուել
 Ու սև մուսլին յանձնել մեր ուղին:

Ու գլխիս վերև արծիւն էր իջել
 Հովն էլ սուրալով գնում էր գալիս,
 Մութ կեանքիս վրայ սև ամպ էր չոքել
 Բաց անորոշը երկնում էր լալիս...



Կուտղ ցուլի պէս պողերս սրած
 Կեանքի պատնէշին ճակատս տրւի,
 Յաղթութեան դափնին իմ կուռը զցած
 Վեհ երազներիս հոգով փարեցի:

Պղտոր հոսանքը առաջս կտրեց
 Եւ կեանքը մթին, և միտքըս յոգնած,
 Սև ամօթաբեր գիշերը արեց
 Եւ դարձրս տխուր, և սիրտըս մեռած:

Ու սև ճամբէքում անհետ մարեցի
 Էն հպարտ կեանքից ոչինչ չը մնաց,
 Գու փոթորիկին զարկայ, ջարդուեցի
 Զահիլ արևս մթնեց ու գնաց...



Ը Ն Կ Ե Ր Ի Ս

Անվերջ գիշերներ
 Անծէր գիշերներ
 Ընկեր, միշտ նստած
 Քո քնած ժամին,
 Ես փիլքը եմ արել:
 Անտուտ գիշերներ:

Երկար գիշերներ
Ընկեր, միշտ նստած
Օջաղի կոխկին,
Քո օրն եմ լացել...



Փերուզ երկինք
Աստղոտ գիշեր,
Կանաչ լերինք
Եւ կոյս և սէր:
Մուսյլ թախիծ,
Անօսը ամպիկ,
Կոյսի համբոյր
Որքան քաղցրիկ:
Օ ջինջ սրտեր,
Եւ մութ գիշեր
Այդ սէր կորաք
Սեւիկ աչեր...



Անցած օրեր
Ախ սե՛ դարդեր,
Մնբուն աչքիս
Էդ սնց ցեցեր:

Ներհակ ինձ հետ,
Միշտ լուռ անհետ
Մանուկ օրից
Մինչ երբ ինձ հետ:
Հիւանդ գլխով,
Խորունկ վշտով
Ախպէր դառաք
Ինձ հետ ցաւով:
Եւ հաշտ ենք մենք,
Եւ գոհ ենք մենք
Իրար կորցրած
Գտել ենք մենք:



Էլ ես չեմ երգում...
Եւ կեանքս գեաէք, իմ վիշտը լացեց
Երբ գողտուկ գիշերն իջաւ իմ վերայ,
Եւ ինձ կաշկանդեց.
Մագերն էր խուլ, աչքերը կրակ,
Ու հայացքը ծով,
Ալմաղ էր ձեռին, պողպատով ջրած
Ու սէրը կրծքին.
Ջարկեց ու տարաւ իմ աչքի քունը
Էլ հանգի՛ստ չունիմ...
Ու էդ օրւանից՝
Մի քար կայ ընկած էն վերան կրծքիս,

Որ վերք սրաով չի թողում շնչել.
Եւ ինձ թւում է՝
Որ եթէ նորից նրան չը տեսնեմ,
Մարդիք կը գտնեն ու կհանձնեն ինձ
Իմ նախնիս բախտ,
Իմ կորսւած խօխտ...



Թ Ա Խ Ի Ծ

Եւ հոգիս ընկաւ լուռ թախծութեան մէջ,
Մենակ ու մռայլ թափառեց գանգիս՝

Խոր ծայրերի տակ:

Եւ պատրանք և յոյս չքացան այնտեղ
Երբ նա խժրժեց թէկուզ ակամայ՝

Մտքիս աղբիւրը:

Այնտեղ ննջում էր՝ հին, փոշեթաթախ
Հաւարունի մէջ,

Իմ աւողջ խօսքը.

Ու ես շարժուեցի մտքերի ծովում...

Բացեց վերև, կարմիր հագած, երկնքի վարդը
Նորա շուրջը շափաղ առեց մեռած աշխարհքը,
Կենդանութեան ցողը իջաւ, ամեն մի անակ
Բայց իմ սիրտը ոչ հերթ ունի, և ոչ մի դռնակ:
Խորունկ ցաւով, քողը գէմքին, սահեց ամբողջ օր
Կանգնեց յանկարծ, շիջաւ իսկոյն յոգնած էր ինչ որ,
Տառապանքի սեր հագած, մուշտակը ուսին
Մեռնողն այդպէս է կուլ գնում կեանքի տարածքին:
Բայց նա նորից վաղը կը գայ, փայլ կտայ այդպէս
Սրտերն ամբողջ կթռթռայ, վախկոտ են ինձպէս.
Ջերմութիւնը ուժով գրկած, կապրեն և մի օր
Որ վաղն անհետ երկրի խորքում թաղեն նորից նոր:

Իսկ իմ միտքը երեկոներն ցաւով է խորհում
Թէ գիշերը քանինն ընկան, ովքեր են զարթնում,
Ու մարդկային անապահով, կեանքը շալակած
Լուսնի նման լաց է լինում վշտում տապալկած:

ՀԷՆՅ ԱՅԳ ԵՄ ԵՐԳՈՒՄ

Մռայլ է շուրջը...

Վիթխարի կեանքի երկաթ ոտի տակ
Որպէս մի փալաս ընկած եմ ախուր.
Յաղթած և անոյժ որպէս ուրախան
Իմ մանուկ կեանքի երգն եմ ոլորում.
Եւ շուրջը մռայլ, երկինքը թախծոտ,
Խորունկ լուսթեան միայնութեան մէջ
Անձրև է մաղում:

Եւ արմը աշխարհ, իմ սրտիս նման
Դաւ ու ցաւերի երկունքով բռնւած՝
Տնքում է անվերջ.

Աշխարհն էլ մռայլ ինչպէս առեղծւած
Կեանքն էլ մի թիլիսմ.

Տիեզերքն հանուր խելագարութիւն
Աստուծ մի ցնորք.

Իրականութիւնն երազ ու խոհեր
Նպատակը սոսկ մի արտադրութիւն,

Իսկ ամբողջութիւնը մի ոչնչութիւն
Ես այդ եմ երգում:

Արհամարանքը իմ հպարտ ես—ի

Դէպ անարգ կեանքը

Մի սկզբունք է.

Վիշտը ինքնըստինքեան սրբազան տաճար

Ուր վախկոտ սիրտըս իր մոմն է վառում

Եւ ծոնըրը դնում...

Կայ, կայ ցաւ ու վիշտ, որի անունը՝

Սարսափ է սրտիս

Ես այդ եմ երգում:

Քարափ է սիրտըս...

Ուր լուռ գիշերին ամեն արարած

Այնտեղ է մտնում, ապաստան խնդրում.

Եւ դաւ, դարարէք, դարգ, ցաւ նպատակ

Հանուր մի աշխարհ, անհուն տիեզերք

Այդ ինքն է որ կայ...

Այդ խուռչն է իմ վսեմ Աստուածը

Նրան եմ փնտռում.

Սակայն նրա էլ մահամերձ կեանքի,

Դազազն եմ շինում

Հէնց այդ եմ երգում...

Ես կեանքն եմ երգում...

Այնտեղ, ուր մարդը ցաւ ու հոգս մէջքին

Հսկա երկրի հետ կուրծք կրծքի տւած,

Անյոյս ու մռայլ քրտնաջան ոգով՝

Դալիքն է սերմում

Ես այն եմ երգում:

Եւ այնտեղ եմ ես ուր մարդն ահաւոր

Քարացած երկրի կուրծքը պատռելով,

Դալկացած ու հեզ եղբոր երեսին՝

Սև հող է գցում.

Եւ որովհետև գերմարդն է մեռնում,

Այդտեղ էլ եմ ես իմ երգը երգում:

Եւ ուր խոնջացած՝

Մաշոզ մտքի հետ հանգիստէ առնում,

Գեղջուկը ինքնին՝ պարփակում իւր մէջ

Ու անվերջ խորհում.

Եւ ծով վշտերի, անհաս տենչերի

Ծալքերում թաղւած,

Այդ կեանքն եմ երգում...

Օ՛ կարիքն է այն, որ նրան այդպէս,

Քուռ, նենգ ձեռքով ճմռում է ուժգին

Եւ երկրին քսում

Ես այդ եմ երգում...

Օղի մէջ տարածւած էր մի անախորժ հոտ
Դաշտում նոր վերջացել էր նախճիրը,
Իսկ ագռաւները խմբուում էին բարձրում:

Փողերը լռել էին՝
Եւ նրանց տեղ բարձրանում էր արեան բոսորային ցուր
Անգղերը կացահարում էին լէշերը:

Ու մտքիս պէս յոգնած էր իմ կորաքամակ ձին:
Երկինքը մթին էր խաւարի նման,
Իսկ աչքիս դէմ բորբոքում էր եղբայրասպան կռիւը
Մենք կրկէսից էինք դառնում...

Տխուր, և ցաւագին էր իմ սիրտը
Բայց լացըս չէր գալիս
Եւ երբ՝ վեհութեամբ մօտեցայ քո շրթին,
Դու ինձ կաշկանդելու մի թիլիսամ դրիւր այնտեղ:

Արևի գունդը դժւար թէ կարողանամ գրկել,
Բայց առանց դրան՝ դու ինձ ջերմութիւն ես տալիս
Մանաւանդ յիմայ, երբ ապրելը այնքան դժւար է:

Քո վճիռ արցունքներում ես կարդում եմ իմ ներքինը
Երբ սիրոյ ուժգնութիւնը երկուսին պահանջում են միանալ
Տաք երկտրակութիւնը յաճախ շատ բան արժէ...

Ու կեանքի էութիւնը դ՛ու ես քու հակադրութեամբ,
Դէմքիդ փոփոխութիւնը դաւաճանութեան նշան է
Զլինի թէ մօտովդ մի գեղեցիկը անցաւ:

Դրան էլ չէի նախանձի
Եթէ միայն՝ գեղեցկութեան սիրահար լինէիր,
Բայց դու ժամանակի տիկնիկն ես
Ահա սրն է ցաւը...

Ու մտքերս սև էին
Եւ խոհքս թէև ուռած՝
Սոված գաղանի նման կաղմկէր տարածութիւնը
Ուր ես լռութիւն կը փափագէի:

Եւ տիեզերքը երազներիս շարքն էր
Ու երբ՝ վճռականօրէն ես ասացի իմ խօսքը,
Նա դանդաղութեամբ ինչպէս ուզտ՝
Ծնրադրաւ երկունքիս մօտ:

Ու լացեցի մեծ խօկը մարդկային տառապանքի,
Եւ ձայնս ուժգնօրէն հեծկլտաց անհունութեան մէջ
Ուր իմ ցեղն էր յղի իւր տանջանքներով...

Մահաուիթ թոյներ էին որ վարակեցին իմ սիրտը
Արիւնս ազատ էր խուրձ երակներին մէջ,
Ու զգայական ցաւը չէր թացել տամուկ ճակատըս:

Բայց մահս մօտ էր, ու վարակումն անխուսափելի
Կեանքս գտնուում էր յորանջող վարանման մէջ՝
Որ չէ գտնում մի հնար փոթորկից ազատելու:

Ու ես պատրաստուում էի օղջակէզ գոհի նման
Ելակէտ ընդունելով տիեզերական օրէնքները,
Թէ ծերացած կեանքը պիտի ընկնի բնութեան
Հարւածների տակ:

Բայց ես մանուկ էի, ու միտքս թէև տկար՝
Մեռնող իղձերուս գերեզմանը կը փորփորէր,
Ուր դիակըս այլանդակ, ընկած իւր մեղկութեամբ՝
Լուռ հեգնում էր կեաքի ցաւը ամբողջապէս...

Ջրածգօրէն սև մթութիւնը կերաղէի,
Ուր մարդիկ մեծ կելտաին ամբարտակը կը փորէին՝
Սեփական ստամոքսը կշտացնելու...

Ու երազները վեհ չէին այդտեղ,
Անաղմուկ կատարները իղէալի թեւերուն վրայ՝
Ուր անորոշ անծանօթը կը փայլատէր:

Եւ դաշտը լի էր սողուններով,
Երկիրը մի կատարեալ աղբանօցի կ'նմանէր՝
Ուր ճիճուները արբեցած կօրօրէին...

Մքանչելիօրէն ապրում էի հոգուս ծայրերուն մէջ
Գեղապաշտ բնութեան իրիկուններուն հետ՝
Երբ երազներս զարթնում էին նիրհած գեղեցկութենէն:

Ու իմ սիրտը տիեզերք էր վճռական ըուպէներին,
Ես չնչում էի մեծ բնութեան ցաւը՝
Ու հեգնում խենթ պարը կարապներին:

Եւ նիհար պաղարիւնութիւն կար իմ մէջ,
Թարձրը վեհութիւն ունէր այնտեղ՝
Իսկ միտքս ճգնում էր նպատակի գոյութեան վրայ:

Եւ հոգիս մենակ էր փախչող երազներին հետ,
Յոյզերս մարել էին սգեորութեան վայրկենին մէջ՝
Ու ես մարում էի թախծոտ մտապատկերներէն վար...

Ու մենք հիւանդ էինք՝
 Եւ անկարող շարունակել կռիւը,
 Տիեզերքը իւր անկատար երկունքն էր թևակոխում
 Իսկ մենք հպարտ էինք մեր երազների հետ:

Եւ նահանջում էինք վճռականօրէն.
 Հարւածը տեղին էր՝ ու յաղթութիւնը կատարեալ
 Անգղերը կտցհարում էին մեր լէշերը:

Բայց մեր խոհերը ապրեցին այնուամենայնիւ.
 Սերունդների հետ նրանք ձայնակցեցին՝
 Ու մեռան անհունութեան մէջ
 Երբ կեանքը երգ ունէր իւր շրթունքներում...

Քրտնաթոր երիվարիս մէջքն էի ծառացած
 Եւ փոշին ամպի նման սրընթաց կը վազէի,
 Ուր նիհար և յոգնած աղանջներուն հետ՝
 էշէրն էին կանգնած ասպարէզուն վրայ:

Ու կը խտանար շարքերը մարտնչող հերոսներու,
 Եւ քամին մերթ ընդ մերթ կը վազէր վերելքներով
 Ուր ամբողջ հարբած անգիտութեան մէջ՝
 Աղմուկով ու հիացած կ'ծափահարէր տեսարանը:

...Եւ այդ եզան սայլերու մեջէն կանցնէի յամբօրէն,
 Մերկ կուրծքս բաց՝ ու գլուխս հպարտ ճոխ երազներով
 Ուր յոյզերս անմեռ էին ու անգոյն,
 Եւ ուր ամբօխի խուլ քրթմնջոցին դէմ՝
 Վեհ սաղմոսերգս հնչեցրի

Այդ յաղթանակն էր ասպարիզին:

Ու վայեցին բուերը խեղկատակ հերոսներու՝
 Եւ նետասլաց երիվարիս ճերմակ բաշին դէմ,
 Կեղտոտութեան սև ամբարտակ մ'ուղղեցին
 Բայց ես մաքուր էի իմ թռիչքին մէջ...

Ու սոված էինք՝ և դուրս եկանք քարերը կրծելու
 Մթին հովերու հետ և առաւտտեան շողին դէմ՝
 Ուր ցօղը անապատը կը թացացնէր:

Ու մեր քայլերը անմիտ էին վճռականութեան հետ,
 Եւ թէպէտև ճոխ սեղտմներէն անցանք՝
 Բայց ոչինչ չ'գտանք սփոռցներին վրայ:

Հեռուն թախծութիւն կար վարագուրած,
 Մեր ստամոքսը կ'վրընգար սովածութենէն՝
 Իսկ մենք քայլ առ քայլ կընկնէինք խոտերին մէջ:

Անկման երգն էր որ կը պոռթկար մեր սրտէն,
 Մենք գերի էինք այն անմիտ պահանջին՝
 Որ վեհութիւն չունէր իւր տեսակին մէջ:

Ու երգեցինք վայնասունով դատարկութիւնը ստամոքսին
Որից միտքը բարձր էր, ու գաղանիքներով լի՝
Եւ որ ուռած խոհերով բարձունքները կը դիմէր
Երազներուն մօտ:



Եւ քամիների հետ ձիւնոտ առագաստները բացած,
Գնում էինք սարերի կատարները քերելու՝
Ու խաւարը թողնում մեր ոտների տակ:

Մեզինց վերև ամպ չկար, իսկ ներքև
Եւում էր ամբողջային ժխտը,
Որը մաքուր ոչինչ չունէր բացի աղտոտութիւնից:

Ու մեր թռիչքը վեհ էր ու գեղեցիկ.
Մենք գնում էինք գեպի այն մեծ անհայտը,
Ուր գիշերն էր փայլում իւր աղջամղջով:

Եւ այդ գիշերը պայծառ էր ու փայլուն,
Հոգիներս ազատ էր ճշմարտի գիտակցութեամբ՝
Իսկ մտքներս անկախ իրանց ուրոյն երազների հետ
Մենք կեանքն էինք հասկանում մեր տեսակէտով:



Ու կեանքի պէս մութ, ու ցաւի պէս լուռ
Կրում է մարդը իր խաչն անառը.
Ու խօսքի չափ մեծ, ու սիրտը ամուր,
Խեղդում է տենչը և վիշտը հզօր:
Եւ կրքի բռնկումն, հոգեկան շարժում
Եւ կուրծքը պատնէշ զարնում են իրար.
Ու ցաւի պէս խուլ, ու մարդու պէս լուռ
Փորում է հիմքը ընկնում չարաչար...



Աչքերս թաց էին երբ հպեցի նրա լնդերքը,
Զրթերս դողացին՝ ու միտքս հիւսեց սոսկալի երզը իմ ներսի
Դա գաղտնիքն էր իմ արտասուքին:

Եւ վերքերս խոր էին ու հսկա,
Տիեզերական վիշտն էր անաղմուկ կրծում իմ ներսը՝
Որի մէջ ես լալիս էի կեանքի ցաւը ամբողջապէս:

Ու ձուլեցի մեռնող պաղութեան հետ մի անասելի զայ-
լոյթով,

Երբ տիեզերքը փլուում էր՝
Եւ կեանքը տապալկում իւր ցաւի մէջ:



Ու օձերի խուճերը առաջացաւ դեպի ինձ,
 Լեզուի տակ խայթելու թոյնը ունէր բռնած՝
 Իսկ դէմքին մահառիթ ժպիտը ածխացած:

Ու սուլեցին ուժգնօրէն երկշոտ ատելութեամբ.
 Ահաւոր վնչոցից օդը կը խանձկուէր՝
 Եւ հրէղէն բոցերի մէջ հորիզոնը կ'տապակուէր:

Ու սողացին երկարօրէն գալարելով ցաւի հետ,
 Եւ մի շար ու պաղ շնչով ամայացրին բնութիւնը
 Դրանք մարդիք էին անհունութեան մէջ...

Ու նորէն արթնացին տառապանքներըս.
 Կարմիր գազանի նման եղինձը ունէր բռնած,
 Եւ մեռնող պաղութեան հետ՝
 Հոգուս գեղեցկութիւնը կերպէին:

Ու թացացաւ սանդուղքը վերելքներին վրայ,
 Եւ հսկայական գոռ ճիչերուս դէմ՝
 Երկինքը սայթաքեց ինձ:

Ու միտքս հպարտ էր,
 Եւ յոյսերս խաղողի ոխկոյղի նման՝
 ձիթ-ճիթ կհպէին լնդերքըս...

Եւ առանց շրթունքներիս փողը քինախնդիր
 Ազգարար ցատումի,
 Ու հիւսիսի ցուրտ արևադարձին դէմ՝
 Հորիզոնը խանձկրտեցի:

Ու լացեցին մայրերը սնապարծ հզօրներու,
 Եւ ցաւի ուժգնութիւնը խնկարկեցին դիացած
 Ուր ես իմ մեծութիւնը կպտամէի...

Ինձանից դուրս՝ դուք ձեր առանձին ծիծաղը ունէիք
 ձեր շրթունքներին,
 Իմինից միշտ տարբեր՝ ձեր խոհերն ու մտածմունքները.
 Անհոգ իշու նման կեանքն էիք հասկանում ձեր տեսակետով
 Ապա ինչո՞ւ էր մարդկային ձեր կերպարանքը...

Վառօղի ծխի նման աշտարակ էիք կանգնեցնում մէկ-մէկու
 ճակատին,

Եւ յետոյ կը ծոռում այնքան անարգւած ձեր սեփական միտք.
 Եւ եթէ այդ բոլորը անասնական չէ
 Ապա ինչն է ձեր մէջ մարդկային:

Ժահրոտ պարարներ ունիք ձեր դէմքերից կախ ընկած
 Որոնք մի սարսափելի տանջանք են յիշեցնում,
 Եւ եթէ այդ բոլորը անբնական երևոյթներ են
 Ապա ինչո՞ւ է ձեր միտքը խորհրդաւոր:

Ու ձեր խոհերն սւ մտածմունքները այլևս չեն հետաքրքրի
ինձ
Քանի կտեսնեմ՝ էդ շրթունքներին կանգնած օձի ծիծաղը.
Ի՞նչ էք մտածում այդպիսի ըոպէներում
Մի՛թէ, իրապէս դուք մարդը ինքն էք...



Ու աշխարհն համայն, տառապանքի հետ՝
Հեծում է շնչում.
Եւ չկայ մի մարդ, որ բերան բացած՝
Այդ վիշաղ երգէր
Ես այդ տանջանքի խենթ մարմնացումն եմ:
Իմ խոհերն ուռած մերկ սարածութեան
Քարձրերն է չափում,
Որտեղ թախիծն է.
Կեանքը շատ է թոյլ իւր հարւածներով
Ինձ գլորելու,
Ցան է իմ մէջքին.
Եւ մարդիք ամեն, տիեզերքի հետ,
Ի՞նձ են փայփայում
Ես կեանքի խաչն եմ...



Անհոգ օրերին երբ մեր միտքն էր ծոյլ
Անքուն յորանջի թառաչ մեր շրթին,
Եկան նստեցին մեր սրտի վերայ
Չթողին շնչել...

Եւ հազար տարւան մեր կաս-կարմրին
Չորերը հանած՝
Սկեր հագուցին

էլ չէնք երգելու:

Ու մեծ բռնաւորն երկաթ ճանկերով
Պատուեց ու հանեց մեր կրակ սրտերն
Որ էլ ցաւ չ'զգանք
Եւ երեկոներն՝
Երբ անհոգ մարդիք աստղերն են երգում
Մենք անհետ կորցրած
Մեր սիրտն ենք լալիս...

Եւ ամեն անգամ,
Երբ մեր վէրքերից թարախ է հոսում՝
Անէծքի ասեղ տարափ ենք թափում
Դուշմանի գլխին
Ուր սուր պողպատով մեր կեանքը շամփրեց՝
Ու գուրսը ցցեց
Մենք էլ չէնք երգում...



Դեռ անտառին չհասած՝ սարսափելի կլանչոց էր որ լսեցի
Ազոաւները խմբերով թափահարում էին իրանց թևերը,
Իսկ ամբողջը վրնգում էր սովածութենէն:

Ու մեր քարւանը ոյժ չունէր եղածը սանձահարելու
Աշնան տերևների նման նրանք ընկնում էին՝
Ու մեռնում անհունութեան մէջ.
Դրանք գերի էին երազների վեհագոյնին...

Եւ մեր սիրտն ամբողջ խոցւած մի ձէնից
էն մութ սարերին հոգով կարօտած՝
Մի սև դուշ դառաւ, ուզեց որ թռնի:

Բայց մեր թևերին մի քար կար ընկած
Եւ վամպիրի պէս մեր կրծքին չոքած՝
Մեզ լիքը սրտով չէր թողում շնչել:

Եւ մեր շուրջն ամբողջ աշխարհը մթին
Ու մեր կոկորդին՝
Մի բռունցք ուժգին դանակ էր խոթել,
Չէր թողում շնչել...

Ու շարան-շարան անցնում էին սերունդները,
Ուշացած ճամբորդի նման վիշտը առնում ճակատներին՝
Ու մտնում տիեզերքի խորքը:

Եւ նրանց շրթունքը խօսք չունէր տարածութիւնը աղմուկելու
Անձրեային ճիճուի նման նրանք սողում էին,
Ու փլուզ գերեզմանի նման ամփոփւում իրանց մէջ:

Ու կեանքը ծիծաղում էր նրանցից բարձր.
Եւ թէև համոզւած էր, որ գեռ կատարելատիպ մարդու
հետ գործ չունի
Բայց այնուամենայնիւ չէր խնայում իւր արացիները:



ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ք Ի Ր Ս Ի

Ու այդ մեծ օրից ամենքին ի տես՝
 Կախած է այսօր յուշեր իմ մտքէս.
 Որ չէ թոյլ տալիս զգոյշ մօտենալ
 Ամենին մէկ-մէկ իմ համբոյրը տալ:
 Ուր քիրսի շորս կողմ բարեկամքս աղքատ
 Ձեռքէ ձեռք թուցնում էին ինձ վհատ,
 Իսկ հայրս կանգնած ծիծաղը դէմքին
 Ասում էր նա է իմ աղիզ սրգին
 Որ չարութեան հետ և խելք կունենայ,
 Թայ ու թուշերից միշտ առաջ կը գնայ:
 Ու պաս օրերին մեր կտարած քիրսին,
 Իր մէջքն էր առնում մի լեռ ահագին
 Թթու դոխ ու բոխ, կարտով, մշաջուր
 Չարեւ ենք ամենքս անխօս և ամուր,
 Մեծ քոյրս գցեց սուփրէն ու կանգնեց
 Ես էլ օրհնեցի սեղանը բացեց
 Ու հայրս վաստակ խաչ հանեց դէմքին,
 Մայրս էլ բաժանեց մեր հացն առանձին.
 Անհաշտ էի ես, եղբայրներիս հետ,
 Ձէի կարենում հաշտել փայլի հետ,
 Ու մինչ քոյրերիցս ջուր էի ուզում
 Գլխիս անհամար անէծք էր թափում
 Անգամ հացի վրայ թոյլ չէի տալիս,
 Այդ խեղճ փոքրերին հանգիստ ընթրելիս
 Բղաւում էին հացը շատ կերաւ

Էգուցայ համար բաժին չթողաւ.
 Իսկ մայրս էրւած զըմփ իմ մէջքին
 Հասցնում էր յանկարծ ձեռքի արացին
 — Խօ թշնամի չես, էթ ինչ ես լսել,
 Ո՞ր տափ արտերին ես աչքդ գցել...
 Եւ երբ գալիս էր ճրագի հարցում
 — Կարդում եմ աղջի էլ ինչ էք ուզում
 — Չէ՛, ասում էին նաւթը շատ կը գնայ
 Էգուց իրիկան էլ բան չի մնայ:
 Ու երկարում էր կռիւը այդպէս
 Մինչև յողթողը լինում էի ես.
 Իսկ հայրս գոմից դառնալուց յետոյ
 Որ գնացել էր եզան կեր տալու,
 Կանգնում էր գլխիս ինչպէս մի դշտոյ
 Եւ պատրաստում էր խրատ կարգալու:
 — Ամբողջ ցերեկը խաղով ես ընկել
 Իսկ յիմա եկել կպել էդ քիրսին,
 Թէ որ քեզ մէկ էլ էդպէս եմ տեսել
 Վայ էն ժամանակ քու խեղճ արեւին:
 Ու մէկ էլ տեսնեմ մէրս էն կողմից
 Գիրկն էր առնում ինձ ու պինդ համբուրում,
 Հրճում էր խնդում մեր առնը նորից
 Ամեն Ասածու օր էդպէս էր լինում:
 Ու այսօր չկան. այդ բոլորն ամեն
 Մնում է գլխումս ինչպէս յուշք երազ,
 Եւ երբ կոպերիս արցունք կը դիզեն
 Ողջ այդ մեծ կեանքը կերգեմ ես նուազ...

ԳԻՒՂԻ ԵՐԵԿՈՆ

Հոսում է քնից ինչպէ՛ս մարգարիտ
 Զիլ դողանջիւնով իմ երգը արծաթ,
 Եւ երբ նայում եմ կանանց կարմրախիտ
 Յիշում եմ իսկոյն առուն խանդակաթ:
 Ուր հատ-հատ կզած կժի կւթերին
 Խմբերը մատաղ նայում են հերթին,
 Եւ մեզմ լուսինը կարկաչ գիշերւայ
 Հնչում էր այնտեղ իմ երգը վաղւայ:
 Հովը սուրալով շարժում էր տերև
 Լսում էր կիրճից խինդ կանչը վերև,
 Եւ հարս ու աղջկայ բերնին մի ծամոն
 Այդտեղ է ամբողջ գիւղի երեկոն:
 Լաշակը գլխից նեճում են ներքև
 Սիրած հերոսից խօսում հեի-հե,
 Եւ երբ այտերին քաշում են ցուրտ ջուր
 Արին է կաթում ինչպէս վարդաջուր:
 Դող-դող շտկում են ծամերը այն խիտ
 Կոկում վարսերը, մատերը յակինթ.
 Ու կամաց կապում աղլուխը սիրած
 Էն տղի ձեռքով առած ու զրկած:
 Եւ կուժը այն հին բռնում են ուսին
 Ծիծաղ ու ժպիտ առնում շրթերին,
 Որ ինչպէս գարնան հասուն մի խնձոր
 Դանակն է պակաս անի կէս կտոր...

ԿՍ. Լ Բ Է Կ

Տաւարածն էդտեղ իր դագէն մտած
 Բաց դաշտի վրայ նախիրն է թողել,
 Կշտի կրակը մխի մէջ կորած
 Ինքն էլ շորերով անհաց է քնել:
 Զի լսում մի ձայն, խաղաղ գիշերին
 Բաց կանաչաւուն անտառի միջից,
 Մի վախկոտ սոււեր խուրջինը ուսին
 Փախչում է ասես իջնում է սարից:
 Եկաւ ու կանգնեց վիճակի գլխին
 Այնտեղ՝ որից ցած գիւղն է յորանջում,
 Կանչեց միալար «տարին Սօնային»
 Ու գիւղից ահա մի շուն է հաջում:
 վերմակի տակին մենք կուշ ենք գալի
 Իսկ պառաւները կամաց քըշվըշով,
 Խմբում են իրար ու սիրտ են տալի
 Թէ՛ նրա հախից կը գան Աստուծով:
 Ու երեքում է ձայնը զանգակի
 Վախից հալածւած առոյգ ու հնչուն,
 Թէ եկէք խմբէք դարպասը ժամի
 Եւ գիւղում ահա մի հաւ չէ մնում:
 Վիճակի գլխից էլ ձայն չի գալի
 Չորան էր թէ ինչ կանչեց ու գնաց,
 Բայց ահա էստեղ շատերն են լալի
 Ու՛ ջահիլները գինում են կամաց:
 —Ասումեն օրէն դաշաղ է կոխել

Դէ շուտ իգիթներ հասէք սրբնթաց,
 Խաւարից օգուել, աղջիկ են փախցրել
 Հասէք թէ հալալ մօր կաթ էք ծծած:
 Եւ տհա մի խումբ թայ ու թուշ տղերք
 Թւանք խանչալով գէպ սարն են ելնում,
 Մենք էլ բազարում գղիր ու խօխէք
 Կրակ ենք արել ու բերդ ենք խաղում:
 Մինը ասում է թուրք դաշաղ կը լինի
 Արաղից անցել էս կողմն է եկել,
 Որ երբ գիշերւան խաւարը աիրի
 Աշխատի մի կերպ Սօնին փախցընել:
 Իսկ միւսն էլ թէ՛—Օվին է էդ մեր
 Ջիւան սորերում մենակ փաթ տըւող,
 Որ մութ գիշերին անգէն անընկեր
 Եկել է գտել իր բութէն ասնջւող...
 Բայց էդ գիծ տղէն զուր թողաւ իրան
 Մելիքի թուրից էլ չի պրծնելու,
 Եւ եթէ գլխով երկինք վերանան
 Դարձեալ երկուսով մատաղ են գալու:

Ե՛լ իւրդից վերե մի քար կայ ընկած
 Որտեղ հարսները վիճակ են հանում.
 Ահա հէնց էդտեղ Սօնան է ընկած
 Իսկ անտակ ձորում Օվին է փթում...
 Եւ երբ կանաչը սլատում է կրկին
 Լեռ ու ձոր բացում Սօնայի նման.
 Օրի աղջկերքը առնում են սրնին

Խունկ ու մոմ տանում էդ անբախտ կնկան:
 Բայաթին բարակ հնչում է նորից
 Անմուրաղ կեանքը ողբում են սգով,
 Ու աեսակ-աեսակ վարդ ու ծաղիկից
 Զուգում են նրա հանգիստը ցաւով:
 Իսկ գեղ բնութեան էդ նախշուն օրին
 Հովիտ ու բլուր ջոկ փայլ են տալի.
 Մով հագած սարի ձիւնոտ կատարին
 Բոխ քաղոյ աղջկանց զիլ ձայնն է գալի...

ԲԱՐԻԿԵՆԴՍ

Դուրս եկան անից ձորը թափւեցին
 Արեւ վախլուկ նայում էր սարին,
 Նախիրը հանդից եկել էր ջրի
 Ու խումբ են կազմել գնում աղցանի:
 Ամեն մէկի կուռ մի կողով գցած
 Դանակն էլ փոքրիկ սուփրի հետ առած,
 Մատաղ հարսները կարմիր գոգնոցով
 Փը՛ռռ արին անցան էն խաս բաղերով:
 Կանչ ու երգ ցաւով ամեն կողմ բռնեց,
 Կողովը այն հին կանաչից լցեց,
 Ու ամեն մէկը գոխ, սիրեղ, ու գինձ
 Քաղում է շտապ և սոխ և եղինձ:
 Առուների սակ ուր ձիւնն է հալուել

Մանուշակն համեստ վախուկ դուրս ցցել,
 Ու այդ օրիւրին գիւղում ընդհանուր
 Ուտում են ամենքն պատուայ կերակուր:
 Պառաններն այդպէս դուզում են թոռանց
 Մեծ պասի սկզբին երբ բաղն է կանաչ,
 Ղրկում են էնտեղ աղցան քաղելու
 Կամ իրիկնադէմ մի ձին բերելու:
 Գոգնոցն էդ ժամին գիւղի աղջըկայ
 Ի՛նչ ասես չասես որ գիրգ չզառնայ,
 Գեանից նոր ծլած դեռ խաս նուբարով
 Ծաղկունք է քաղել հազար թերթերով:
 Առնում է կողովն տանում աղբիւրում
 Էն մաքուր ջրում սրբում, լուանում,
 Ու ձեռքն էլ մի փունջ մանիչակ բռնած
 Մի տղի համար կրծքի մէջ պահած:
 Ու երգ կատակով խումբը տակաւին
 Ծամոն անելով թաղնում է կրկին,
 Երբ մի սև տղայ խուրջինը առած
 Իջնում է դեպի հնձանը մթնած:
 Իսկ քիչ յետոյ էլ քամ-խաչից ահա
 Ուխտաւորները մեր կտրի վերայ,
 Ժամն էլ իրիկան տւեց դողանջով
 Այդպէս է գիւղի մեր կեանքն ապահով:

Ս Ա Ք Օ

I

Ապրում էր անհոգ ուրախ ու թեթև
 Չուրջը անտառը բուրում էր կանաչ,
 Ձիւնապատ սարի շաքին ներքև
 Խոր այրի-չայն էլ հանում էր հառաչ:
 Ու ձորագետի անուշ կատարում
 Էն խաս թիթեռնիկ հաւքերին ընկեր,
 Իւր պառաւ մօր հետ ապրում էր շնչում
 Սաթօն երկնամբարձ ինչպէս մի եթեր:
 Չուրջը փրփրադէզ ջուրը ճերմակին
 Ձիւնէ բլուրով սարերը իր հետ,
 Ընկած մարգերի թաւիչ կանաչին
 Մութ հորիզոնին նայում էր անհետ:
 Ու միտք էր անում փորսողին տալով
 Ինչպէս մի թիթեռ սահող, երկնաչու,
 Խոր երազների անդունդն ընկնելով
 Թէ՛ երբ է կրկին էն օրը գալու...

II

Խաչնարած ցեղի ընտանիք էր այն
 Ու օրի կողքին խաչ-քարից հեռու,
 Որտեղ հացատան թոնիւրն է միայն
 Ու գերկ է առել գնում մի առու.

Սաթօն սրտնեղած մոմերն է վառել
 Ու սափոր առել գնում ձնաշրի,
 Նախշուն մաղերի հիւսերը խմբել
 Ու երգում արել երբէք չքանդի:
 Կեանքի մէջ անուշ էն օրն էր միայն
 Ու Աստուած կանչում երբ կը գայ նորից,
 Նա լեզու կառնի կը խօսի այնժամ
 Ողջ աիեղերքի ցաւից ու չօռից:
 Ու արխաշից ցած ձորակի բերնին
 Զինչ արշալուսի էն կապոյտ ֆօնում,
 Տխուր ու անփայլ աստղերը կը ծքին
 Խոր լռութեան մէջ լիճն է փայլփլում:

III

Վարդաւառին էր երբ կարմիր հագած
 Ինչպէս մի խրտնած ու վախկոտ էրէ,
 Եկաւ աջ ձեռքում ծաղիկը սղմած
 Ու այդտեղ խոցեց մի սիրտ երկաթէ:
 Հովիւ ու գառներ խմբել են միտեղ
 Զուրջը շները ոռնոց են հանում,
 Ինքն էլ ծառի տակ բազմել է մէջտեղ
 Ու խնձորները ջրում են լողում:
 Եւ ահա երկու հովիւ պատանիք
 Լճի մէջ մտած մի թոկ բռնեցին,
 Խմբել են նստել օրի կնանիք
 Ու ամեն մէկը նայում է հերթին:
 Կանչում են ծւլում գառներ ու խօխէք

Զուրջը անտառը նւում է կամաց,
 Ու եղեմական ներդաշնակ համերգ
 Դուրս է երկնչում խոր ձորը մտած:

IV

Ու կարգ-կարգ ահա գալիս են գառներն
 Իրար ետեից ջուրը թափելու,
 Անհոգ և ուրախ խօսում են ծերերն
 Թէ՛ ոչխարները լաւ չեն լողալու:
 Թնդում է նորից անտառը զւարթ
 Զուրջը լայն խօնչան շրջան է առնում,
 Ու հովիւի կնոջ տալիս են խալաթ
 Հին վարդավառը այդպէս է տօնում:
 Խաչնարած մարդը ամեն մի տարի
 Սարում ոչխարը պիտի լողցնի,
 Ու մեր Սաթօն էլ գողնոցը կապած
 Կանգնել է հովիւ Նաւօի դիմաց
 Սիրտ չեն անում որ խօսք բացեն խօսեն
 Ամա սրտերը շատ բաներ գիտեն,
 Ու մինչդեռ ջուրը ճղփոց էր տալիս
 Ես տեսայ նրանց աչքով անելիս...

V

Թէ ինչ եղաւ էլ, չեմ գիտում յետոյ
 Բայց այդ օրանից խռովեց արդան,
 Եւ երբ մի օր էլ եղաւ երեկոյ
 Նրա դօշ մորթէ գդակը բերան.

Օրի կնանիքն խմբեցան անուշ
 էն խաչ քարի տակ ցաւով թաղեցին,
 Ու ողբ կապելով լացեցին քնքուշ
 Սև բացւած օրը անբախտ իգիթին:
 Եւ երբ երեկոն իջնում է տխուր
 Ամեն ինչ հանգիստ քնում յաւիտեան,
 Սաթօն խաչ քարից կախում է ամուր
 Ու սիրաբը հանում տալիս ետ նրան.
 Հին սէրը նորից զարթնում է կրկին
 Միաբը ինչպէս բու չում է օտար,
 Ու ինչպէս բոջան նաւօի ծնկին
 Կապւած է մնում լալիս իւր համար:

ԹԹԵՆԻ ԱԾՈՒՆ

Այգու հէնց կողքին աղբ էինք թափում
 Ուր կանգնած էր և ծաղկած մեր հոնին,
 Իսկ զեպի ներքև թթենի ածուն
 Ուր հայրս գարնան քանդում էր կարգին՝
 Ու տանում անկում առւի մի շարքին.
 Այնտեղ և օձ կար, մի սև փշշան օձ
 Եւ երբ մի անգամ էշը նկատեց՝
 Առաջիցս ելաւ ու փախուստ տուեց:
 Փօքրիկ եղբայրս մեծ պատի սկզբին,
 Այդտեղ էր խաղում ջուխտ քոյրերիս հետ
 Եւ հնչում իր երգ:

Ու լուում էր միշտ գովքը դուրեկան
 Արծաթահնչիւն զիւ ձայնը մանկան,
 Մանուշակ ու խոտ քաղում ենք հերթով՝
 Ու տանում տալիս մօրըս գոգնոցով.
 Նա էլ պատի տակ աղցան է անում
 Պատ օրին այդպէս զիւն է կերակրում
 Ու հայրս կանգնեց օրը ճաշ դառաւ
 Բահը դէն զրեց, ու հացի նստաւ,
 Էշն էլ զեպի մեզ սուփրի մօտ բերինք
 Ազատ արածել ամենքին թողինք.
 Բայց քոյրս չկար, և մինչև ձորից
 Կուժով ջուր բերէր հացը կիսեցինք.
 Ու այդ պատառում ամենքից ատւած,
 Առաջին անգամ ուրախ ճաշեցինք.
 Մայրս էլ նկատեց որ չեմ կշտացել
 Բայց այդ օրէնք է քիչ պիտի ուտել,
 Ու խմբով ելանք առոյտ քաղեցինք,
 Քացախով կերանք ու յետ նստեցինք:
 Այդպէս է այնտեղ, չոր հաց չկայ միշտ
 Եւ ինչքան էլ որ սրտով աշխատես՝
 Տարւայ մեծ մասը սոված պիտ նստես.
 Այնտեղ և դարդ կայ, սև, մեծ սարի պէս
 Եւ երբ մի անգամ շէմքը ճանաչեց՝
 Իմացիր որ էդ ցաւով պիտ մեռնես.
 Պարտքի բեռան տակ մէջք է կորանում
 Ու խեղճի ձեռքը ծոցի մէջ թողնում,
 Ազատ ու անկախ ինչ էլ որ ունես՝
 Էն էլ գլխիդ հետ մէկին պիտ ձգես:

Չես ապրի այդպէս, կը խեղտեն ուժով
Տէրաէրն ու քեօխւէն մեծ են օրէնքով
Եւ մէկ էլ տեսար աղբիւրի ճամբին,
Խեղճ հօրըս վաղւայ պատուէրը տըւին
— Էգուց որդուդ հետ մեզ մօտ պիտ բանես...

Ու գնում էինք մեր գործը թողած
Երկուսիս օրն էլ վաճառք էր հանւած
Թէ չէ՛ կսպառնայ կայք ու գոյք խլել
Նրա փողով ենք մեր էշը առել:

Եւ երբ խեղճ քոյրս մօտեցաւ ինձ հետ
Վաշխառուն յանկարծ մեր առաջ ցցուեց
— Էս լաւ անկիներն ինձ մօտ կը զրկես
— Հարկաւոր է ինձ, հայրըս բողոքեց
Նա նայեց խրոխտ, և կամաց հաղով՝
Մօտեցաւ էշին:

Ու մեր աղցանը սև եղաւ էդ օր
Մենք արտասուեցինք,
Իրիկան հացը կուլ չը գնաց էլ
Ոչ էլ խօսեցինք:

Ու այդ սև օրւայ գո՛վքն եմ երգում ես
Որ միշտ երազում՝

Քուն չի տալիս ինձ:

Այգու հէնց կողքին աղբ էինք թափում
Այդպէս է այնտեղ, բայց հոնին չկայ
Նա վազ է հանել տարւել նրա մօտ
Իսկ գեպի ներքև՝
Թթենի ածուն չոր է մինչ այսօր...

Փ Ե Փ Ր Ո Ն Է

Կանաչ չիմանում վրան էր թողւած
Եւ ծուխն էլ բարակ երկինք բարձրանում,
Որին և հովիւը իւր աչքը յառած
Մանուկ էր դառել ու լաց էր լինում:
Այդ այն գիշերն էն երբ չօլում յոգնած
Առաջին անգամ մտաւ նրանց տուն,
Ուր և եղբօրը իւր զիրկը առած
Աղջիկն էր հանդարտ օջաղը վառում:
Ոսկէ յուշերից մէկէն սթափւած
Ելաւ հովիւը քարափը դիտեց,
Ու անուրջներում իւր միտքը տարւած
Մութ հարթավայրում մի բան նկատեց:
Կարմրաթուշ Փեփրոն վարսերը արձակ
Խորիմաստ նազով աղբիւրն էր իջել,
Կարէկի գլխից տղէն մեն-մենակ
Անթարթ նայելուց ապուշ էր կտրել:
Ու մէշի միջին գառները թողած
Չուխէն անբաժան իւր կուռը գցեց,
Ոչխարի կաթնով բաղարճը առած
Դեպի ձորամէջ մէկէն շտապեց...
Աղբիւրի կողքին շիկնած յուզմունքից
Ծածկւած թափանցիկ ճերմակ շղարշում,
Թագնւել էր Փեփրոն աղի աչքերից
Ու ջրի միջին բարակ ծիծաղում:
Պառտեց երկար բայց զուր, ակամայ

Եւ երբ գտնելու ապարդիւն դգաց,
 Քաշեց թփի տակ ու ձեռքը ահա
 Սրինգը առաւ անուշ հեկեկաց:
 Զարժեցին աստեղք փէրուզ երկնքից
 Առուն խայտալով ընթացքը փոխեց,
 Փեփրոյի նանն էլ զգոյշ անցեալից
 Գուրս եկաւ ցաւոտ եղնիկը կանչեց.
 Կերկերաց յանկարծ ձայները մի պահ
 Եւ՝ երբ պառաւր օրան ներս մտաւ,
 Յոգնած քրտնաթոր աղջիկը ահա
 Քաղարճը առած իւր հետ ներս բերաւ
 Եթիւմ չորանին աշխարհն էր սիրում
 Ու ամենքը նրան իւր յարգը տալի,
 Ամա շատ դէփքում իւր տեղը մոռնում
 Խնձոր էր դառնում ու թօլ էր գալի:
 Լինում էր գիշերը արխաջում յոգնած
 Իւր բաժին ալիւրը բաղարճ էր թխում,
 Ու սև ոչխարի կաթով ողողած
 Ղշի թեով էր նրան ուղարկում.
 Անքուն գիշերին լուսնեակի լուսով
 Փեփրոն դիտում էր այդ սէրը յամառ,
 Ու մտամոլոր վշտի թախիծով
 Իւր կեանքը զոհում նրա հաւասար:
 —Քու տատը մեռնի էդ լ՛նչ կս բռնած
 Աղչի, ձորերից յիմմ են գալիս,
 Տեսնում կս հրէն գառները թողած
 Սարերն է ընկել ու գէլ է տալիս:

Կանաչ շիմանում վրան էր կանգնած
 Եւ աթարն այնտեղ ծխում էր ուժգին,
 Ուր և բնութեան տեսքից համակուած
 Աղբիւր էր իջնում օրւայ դիցուհին...



Բէղրած արևն ճամբէն ծռած,
 Խինի քարին վեր եկաւ.
 Հարս ու աղջկունք բաղիէն առած
 Գեղի միջով անց կացան:

Է՛յ մարալներ, էդ ս՛ւր կերթաք
 Այծերն միթօմ եկել է,
 Օրւայ շոգից ձեզ խափ մի տաք
 Չորան Ղարան մեռել է:

Է՛ անփորձներ, աշխարհն էղպէս
 Ցաւը չալկած ման կու գայ,
 Կեանքի զրդին մի օր էլ ձեր
 Դուռը բռնած ծեծ կուտայ:

Ամա խօխէք, դիլագ արած
 Քամու խաչին ուխտ եկէք,
 Վառ արևի շողքը բռնած
 Զիղի քարին աչք ածէք:



ՄԱՅԻԱՆ ՍԻՄՊՏՈՄՆԵՐ

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Եւ՛ գնճւմ էր... և տանում էինք մեռելը յամբօրէն
Ուտերնիս վրայ՝ դեպի ծով հանգիստը,
Ու մեր ներկայութեան անզօրութիւնը կ'հեծկլտայինք:

Եւ լքած մեր խումբը սգաւորների,
Չայնակցելով ներքին խորհրդաւորութեան՝
Մեր յիմար անգիտանումը կերգէինք:

Ու սև ամբարտակը մարդկային կառափների,
Ուր աննպատակ անկումն էր ծառացած՝
Յորդացած արիւնը կը լիզէինք:

Եւ տխմար, ու յղփացած այդ կեանքը յոգնաղքտը
Քերելով կատարը անմոռունի միամտին՝
Իւր գոռ յաղթանակի երգը կը շարահիւտէր:

Ու կանգնեց կարաւանը...
Թխպոտ՝ ու անձրևի կաթիլները կ'ճթճթային,
Իսկ մենք մեր անկման թաղումը կը կատարէինք...

Եւ հանգիստ կտառկեմ հողի տակ յաւիտեան
Որ թողի աշխարհում պանծալի յուշարձան.
Այս կէտե՛ր, այս կէտեր, ո՛հ դարեր կը մնան,
Ոհ անմեռ կը մնան
Եւ անվերջ կը խօսան:

Թ Ա Ղ Ո Ի Մ

Հնչում էր դանդաղ դանգակը ժամի
 Արևը թաղում անդարձ կապոյտում,
 Ու ես կարօտած մի ուրիշ կեանքի
 Դուրս էի տարում յոգնած մտքերում:

Լիքն էր անտառը, բայց չէի տեսնում
 Անուշ ջրերի խոխոջ առակներ,
 Ուր թռչունները ծառի սաղարթում
 Կեանքս էին հեգնում ինչպէս կարապներ:

Չուրջըս նիրհելու պատրաստ շուշաններ
 Թովչական երգեր մի ուրիշ կեանքի,
 Ու ինձ դիւթելու անվերջ երազներ
 Դուրս տանող ձայնով մի ուրիշ երգի,

Մտքիս խաբելու մի պարզ ցանկութիւն
 Ու թմրութիւնը եկաւ ինձ պատեց,
 Իսկ դրան օգնող մի խենթ պաղութիւն
 Եւ ահա կեանքս նստաւ ու լքեց:

Դուրսը ամբոխը խոնուում է նորից
 Կեանքը հեշտաբոյր սողում ինձ օտար,
 Ու ոսկեգանգուր եղեմն աշխարհից
 Դուրս է կոչում ինձ, էլ խորթ իւր համար:

Ու տանում են ինձ մի ուրիշ կեանքի
 Թովում, կախարդուած դանգի զօղանջով.
 Ուր չնաշխարհիկ մի ձեռք օտարի
 Մօտ է գալիս մեզ իւր սեւ երախով...

ՄԵՌԱԾՆԵՐԻՆ

Այժմ ձեզ հետ եմ ուզում փարւել
 Որովհետեւ այն՝ ինչ որ փնտուում էի
 Ապրողների մէջ չ'գտայ.

Ձեր մեռած հոգիներում ուզում եմ գտնել
 ձշմարխան ու վեհը,
 Եւ դորա համար դիմում եմ այն անցեալին՝
 Որի անորոշ արտահայտիչն էիք:

Մաքուր գեղեցկութիւնը ձեր մէջ եմ ուզում փնտուել,
 Եւ մաայլ խոհերով ձեր ծոցն եմ գալիս
 Որովհետեւ ներկան թոյն է ամբողջապէս:

Ու այժմ կանգնած ձեր գերեզմանների վրայ՝
 Հպարտ ու ազատ երզը ձեր շրթունքներից եմ ուզում լսել,
 Ասացէք ինձ, ի՞նչ էր կեանքի իմաստը անցեալում:

Բայց դուք լուսմ էք ձեր քարացած երազների հետ.
Այդ խորհրդաւոր ոչնչացումը
Միթէ, չի պտորաստում մի ծիծաղելի ապագայ,
Երբ մարդիք իրանց խօսքը ասած՝
Ու վերջացած կը լինին:

Եւ ես ձեզ եմ պաշտում բաց անորոշի հետ
Որովհետեւ ինձ անծանօթ էք
Ո՛վ անցեալ տառապանքում մեռած,
Ու կորած հոգիներ...

Իմ կեանքը այլևս չի հետաքրքրում ինձ
Եւ ոչ էլ նրա անցեալին եմ տփսոսում,
Նա գնաց, և այսուհետեւ ինչ որ գայ՝
Չորացած կոպերիս արցունքներ պիտի աւելցնի միայն:

Ու ինձ չեմ էլ հարց տալիս թէ ինչու եմ ապրում ես
Հո՞ծ մարդկանց մէջ ինչ որ կամ՝
Այնպէս էլ կը գնամ մինչև գերեզման:

Եւ թող լինի կախ ու փոթորիկ այսուհետ,
Իմ հոգին այլևս չի թռթռում ապրելու յուսով
Որովհետեւ նա գտնուում է մահան հանգրուանի մօտ...

Եւ խանձուած ու կիսամեռ դէմքերը կարտասուէին
Թառամած բոյսերու և այրերուն դիմաց՝
Ուր հրդեհի բոցերը անասունները կը քշէին:

Ու հիւանդ երկունքով և մայրերը կը վազէին
Մահան ճարճատիւնով բաց դաշտը կը դողար՝
Եւ մարդիք ու գաղանները կը փարւէին:

Ու հրդէհը անմեռունկ տիեզերքը կը լափէր,
Արեան շիթերու բաղանիք էր տեսածը՝
Ուր լուսինը մթան մէջ կը փայլատէր:

Եւ մեռանք անապատի մէջ գաղանները գրկած
Կողք-կողքի՝
Ու մեր տխմար վայրենութիւնը հռչակեցինք...

Ահագնատեսիլ ու գողագած երկիրն էր որ կը ճայթ էր
Մարդիք սողուններու նման գլխարաց կը վազէին,
Իսկ քամին վայնասունով կը ձայնակցէր:

Եւ վիշտը խոց էր, ու տեսարանը յուզիչ.
Եւ տիեզերքի այդ խալի ժխտրին մօտ՝
Խենթացած ուղեղները կը սառսալային:

Ու էրէները բարակաւիզ կցատկէին շամբուաներով
Ուր եղէգնուտ ճահիճը կը կլէր ամբողջապէս,

Եւ մարմինների խուլ տնքոցին հետ՝
Տիեզերքը կը փլէշ վարպետօրէն:

Ու գիշերը համը էր գեղեցկահիւս երգերուն հետ,
Փլատակած շէնքերու մուխն էր բարձրանում վեր
Եւ երկինքը անթերի իւր ծառայութեան՝
Գերեզմանային սև քարերու կփոխարկէր իւր ծաղկանոցը:

Ու կեանքը կար.

Եւ մահագոյժ քամին կաղմկէր տարածութիւնը
Ուր վսեմն ու գեղեցիկը գոյութիւն չունէր բնաւ՝
Եւ լուծիւնը սքանչելիօրէն կ'ձայնակցէր...

—
—
—

ԿՍ.ՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ

Դու մենակ էիր, երբ նրանց ասացիր
Ե՛լ կանգնի՛ր,
Եւ մարդիք շուարեցին քեզ լսելով
Ու այսօր քարկոծում են:

Քո տեսքը բաւական էր նրանց սանձահարելու
Որովհետև գեղեցկի կատարելութիւնը քո մէջ էր,
Իսկ այսօր և հալածում են:

Կրքերի բռնկման մէջ ամբոխը չիմացաւ քեզ գնահատել
Եւ դու թաւազլոր ընկար մեր ստների տակ
Դու մեր Աստածն ես:

Աշխատանքի ըօպէներին դու չնկատեցիր,
Թէ ինչպէս տարած էի քո ոգևորութեամբ՝
Եւ որպէս հալւելով ընկնում է իմ կեանքը
Դու և իմ վիշտն ես...

—
—
—

Սովալլուկ դազանն նստած իմ սրտին,
Իւր սև սաթի պէս թևերը փռած՝
Ահեղ ոռնոցով իմ մարող կրծքի
Վանդակն է քերում
Իմ կեանքն է ուզում:

Եւ հազար տարւան իմ խառ ծոպերի
Հուլունքները սուր,
Իր կուռն է գցել ուզում է փախնի.
Ու մօրըս կարած գղակը անտէր՝
Ընկած է գետին
Էլ չեմ հազնելու...

—
—
—

Եւ դու մենակ՝ քո լուռ խաղաղութեան հետ
Թափառում ես լեռների բարձունքներում
Ո՛վ ինքնատիպ գեղեցկութիւն:

Սոսկալի ցաւով երկնում ես,
Ու քաշում քո հեռուորդներին դեպի քեզ՝
Գեպի գեղարեւտի ծոցը
Ո՛վ ազնուացնող առարկայ:

Ջուլած ու մեծացած քո հրաբխով,
Անհաշիւ խոհերի հետ դու միայն
Լուութեան մէջ գին ունիս՝
Ուր քեզ լսողը բնութիւնը միայն ինքն է:

Գերած հոգիների մէջ առաջինը ես,
խանդաղատանքով փարւում եմ քեզ
Իբրև իմ Աստծուն՝
Եւ հեզնում տիեզերական ցաւը:

Յաղթութիւն արտահայտող քո ճակատը
Համեստութիւնն է,
Իսկ քո օգուտը՝ հալածանք մարդկային ցեղի մէջ
Ա՛յ իմ պաշտելի գեղեցկութիւն:

Յաղթնորն ահաւոր յենւած իւր ուժին
Եւ սիրտը կրակ, և սիրտը երկաթ,
Պողպատ է առել իւր կարող ուսին
Ազատ խօսք ու միտք առել շանչի տակ:

Եւ ժողովուրդը հպարտ, գլխակից,
Կարող լրջութեամբ գնում է առաջ,
Գէպ մեծ շնորհը տրւած վերևից
Անկախ մարդու հետ ուր մահն է թաղւած:



Ինչո՞ւ աւիւնս սառեց ինձանում
Ու թոյլ մարեցին հոգուս կայծերը
Իմ երգը լսեց՝ ու ես քուն մտայ
Ինչո՞ւ չեմ շարժուում:

Թմրութիւնն եկաւ թեւերը փռեց
Եւ երբ հնչւում էր իմ անուշ ձայնը,
Ոչ ոք չհարցրեց թէ ում ես երգում
Ինչո՞ւ չը լսեմ...

Տենչախոհ գլխում մարած յոյսերի
Անարցունք վշտի թարգման էի ես,
Միտքս չէր յոգնել, հաց էլ ունէի
Ինչո՞ւ լսեցի:

Չհարցրիք երբեք, ու ես էլ հպարտ՝

Սև մտքերիս հետ մենակ մնացի

Իմ երգը լռեց

Այդպէս կարծեցիք,

Սակայն դ՛ուք մարդիք ապրեցիք յաւէտ...



ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՎԻՇՏ

Տ Ա Ռ Ա Պ Ա Ն Ք

Հոգու ազատութիւնը ձեր մէջ եմ ուզում գնել
 Ու կեանքիս երազանքը ձեր ձեռքը տալիս միշտ,
 Գերագոյն իմաստութիւնը քո մէջ է գտնուում այժմ
 Դէ ասան, ո՛ւր է վշտիս թախիծը:

Անհամար ցաւերիս հետ դու գիտէիր,
 Որ առանց քեզ չեմ մնալ մի բոպէ՛
 Եւ դորա համար օգտուում էիր իմ միամտութիւնից
 Խօսիր այժմ, ո՛ւր է կեանքի յուշքը գեղեցկութեան:

Ճշմարտի էութիւնը հասկանալու համար
 Բարձրութեան անունն էի տալիս միշտ,
 Ու խոհերիս մէջ օրօրեւում
 Հոգուս պարզութիւնը երգում քեզ:

Ու այդ բոլորից յետոյ այժմ դու
 Ո՛վ իմ հսկա տառապանք.
 Մարդկային հոգին ազնուացնելու համար
 Ասա ինձ, որքան կարող է օգնել տիեզերական վիշտը...

Ու մենակութեան հետ՝

Աշխարհը իմ մէջ ամփոփելու եմ գնում

Ե՛ս եմ կեանքի վիշտը:

Լեռների վրայ՝ թէկուզ հէնց արծիւների մօտ
 Ո՛վ կուտակւած խեղճութիւն,
 Մըրկւած բաշով կը գամ՝ ու յաղթահարւած
 Կընկնեմ քո ոտների տակ
 Որովհետև դու հալածւածն ես...

Անցեալի պատմութիւնը չեմ քրքրում այլևս
 Գուցէ այդ շարժման մէջ, դու քո բաժին յանցանքը ունենաս
 Բայց որովհետև դու ես արտասուողը,
 Ուրեմն դ՛ու ես և պաշտելին:

Յնցողիների մէջ պարուրւած քո մերկ մարմինը
 Գրկելու եմ գալիս,
 Ու այդ կապտած շրթունքներիդ վրայ՝
 Տիեզերքը զարդարող խօսքն եմ ուզում դնել,
 Մի խորշիւր ինձանից
 Որովհետև քամիների հետ ես եմ քեզ ձայնակցողը:

Պատկերիդ մէջ իմ երևակայած իդէալն եմ ուզում վնտռել,
 Եւ աչերիդ մէջ գեղեցիկն ու վսեմը տեսնում միշտ.
 Բարձրութիւններ նուաճող քո թռիչքը ազատութիւնն է
 Իսկ քո հեկեկոցը՝ դժգոհութիւն տիրող կարգերի դէմ
 Ո՛վ իմ պաշտած խեղճութիւն...

Քեզ շատ էի կպչում իմ երգերի մէջ
 Որովհետև քո մէջ պաշտելի
 Ոչինչ չէի գտնում
 Ով բորբանած մարդ:

Չօշավիլի օգնութիւնն էլ հէնց այդ էր
 Մտեղծագործող աշխատանքի հետ
 Որ և չէի խնայում
 Էլ մի նեղանալ:

Առօրեայ հոգսերի հետ՝ վիշաք խորունկ,
 Բարձրը վսեմ մոռացել էիր դու
 Եւ մեծ գեղեցկութիւնը անորոշ անծանօթի հետ՝
 Ուրացել էիր:

Ձգտելու անսովոր ճիճու էիր
 Գեանի վրայ քարշ ընկած.
 Խօ չե՞ս նեղանում
 Որ ուզեցայ օտոս գլխիդ դնել:

Ապա ել, և գնանք միասին
 Եթէ չես մեռել դեռ,
 Այն մեծ երկունքի մե՛հ խօսքը լսելու
 Որ տանջանք է կոչւում
 Ո՛վ ծարաւի մարդ...

Ձեզ հետ՝ ու ձեր ուրախանների մէջ եմ ուզում լինել այժմ
 Ո՛վ հեղաղայի աղջիկներ.

Որ այդպէս հպարտացած վէս ճակատներիդ պսակ՝
 Գայթակղացած Ասուածները բերիք դաժ:

Ու այդ հարուստ խոսողների վրայ
 Արեւստների քողը չէ նշմարում այլևս.

Գլուխդ ցածր է, կուրծքդ բաց՝ ու իրանդ թեք
 Աչքերիդ մէջ հուր չկայ, շանթ չես բռնել ձեռքիդ
 Եւ ամօթխածութեան կրակը չէ այրում շրթունքըդ:

Երբեմն գոռոզ եղանակով արտահայտած քո իմացականու-
 թիւնը

Ո՛վ հեղաղայ

Այլևս չէ զարգարում տիեզերքը.

Գէմքիդ արտահայտութիւնը անհիմն է, վշտի կուտակումն
 չկայ այնտեղ

Եւ կոպերդ անթարթ ու անթափանց՝

Ուզում են ասել, որ անկման սարսափի մէջ ես:

Հասակը նոյնն է վարսերիդ հետ որին պակասում է հմայքը,
 Իսկ պատանի Ապոլոնը վաղուց այլևս չի փաղաքշում քեզ.
 Մոռացուած ես ո՛վ մարմարէ անձանախումբ
 Տանջանքիդ չափը որոշելու համար

Խմիր առողջանութեան գինին

Եւ դու կստանաս քո անցեալ փառքը վերստին:

ՏԻԵՁԵՐԱԿԱՆ ՎԻՇՏ

I

Եթէ հաւատում ես, որ առաւտեան շողի հետ
 Չէ մարել և ծաղիկների բոյրը,
 Ապա ես կը գամ դեպի քեզ գրէյցէ:

Երկնի վրայ աստղերը ուրիշ գոյն ունին
 Քան այն՝ որ երևում է այստեղից,
 Եւ եթէ տարածութիւնը կսպառնայ իւր անսահմանութեամբ՝
 Ես կը առնամ այն օղը քեզ հասնելու համար, իմ ընկեր:

Չամբուտների մէջ, թէկուզ հէնց ժայռերի գլխին
 Լուռ կը թառեմ բազէի նման
 Ուր երբէք չէ հասնում մարդկանց գարշապարը,
 Եւ եթէ հպարտ ու շրջանկատ էլ չը լինիմ՝
 Ապա կձախրեմ քո շուրջը քեզ դիտելու համար գրէյցէ:

Եւ եթէ կայ սքանչելիութիւն գեղեցկութեան հետ,
 Որտեղ միտքը պատկանելիս լինէր հոգեկան աշխարհայ-
 ացքին՝

Ես կիմեմ այն փունջը վշտի թերթիկներից
 Միայն քեզ յիշելու համար, իմ տառապանք:

II

Սիրոյ համար սչ մի խօսք եթէ նա համակրութիւն չէ,
եւ եթէ վարդենիների մէջ ես պաշտում եմ քո բացակայ-
ութիւնը՝

Ապա այդ միայն ինձ խաբելու համար է, գրէյցէ:

Ասում են կեանքի մէջ՝ մնայուն ոչինչ չկայ,
եւ եթէ Աստուծոները օղի մէջ չթողնէին մի պարապ՝
Քո բացակայութիւնը կը լցնէր այդ վիհը հէնց ցաւով:

Գիտական, թէ զգայական աշխարհում
Ուր մարդը աւելի շատ շփումն ունի իրականութեան հետ՝
Չեն ժխտում հիասթափութիւնը.

Որքան և բարձր լինիս դու՝ այնուամենայնիւ,
Քո ներկայութեամբ չէիր խլի այն թութիւնները իմ սրտից
ինչ որ այժմ քո բացակայութեամբ.

Չատ կարելի է հեղնես ինձ քո ժպտով
Բայց հաւատացիր, տարածութիւնը պաշտելի է գրէյցէ:

Անհունութեան մէջ տանջանքը կապ ունի ստեղծագործող
մտքի հետ

Եւ եթէ տարօրինակ չի լինի ասեմ որ՝

Այդ սկիզբն է աւնում վշտից,

Գորա համար էլ քո գերը ինձ համար պարզ կը լինի,

Որովհետեւ դու այդ բոլորը մարմնացնում էիր խենթու-
թեամբ:

III

Խորհրդաւորութիւնը սե գիշերների հետ համեմած,
Ուր աստղերը անգոյն էին ու դալուկ
Եւ ուր լուսինը սիրտ չունէր ինձ ժպտալու՝
Քնաւ չգնացի փնտռելու քեզ ծով իրականութեան մէջ.
Անազմուկ նիրհը գերադասեցի քո կենդանագրից,
էլ միտք չկար քեզ դուրսը փնտռելու
Երբ դու ամբողջապէս իմ ներսն էիր, գրէյցէ:

Երևակայութիւն չկայ առանց երազների,
Բայց իմ միտքը երբ յանդգնում է եւ անհունը գրկել՝
Ապա միթէ, իրաւունք չունիմ հարցնելու թէ
—Ինչո՞ւ եմ ծնւել ես...

Ծերութիւնը վաղաժամ չէ, երբ կեանքը արդէն՝
Իւր բաւականութիւնն է առել.
Եւ եթէ մահը ինձ օգնէր՝
Ես կապացուցէի այդ փորձը հէնց յիմա:

Յաւելով եմ երգում, որովհետեւ

Ինչ որ յիմա պիտի ասեմ՝

Մի բոպէ յետոյ իմը չէ.

Եւ եթէ անցածը եւ գալիք համարէր

Ապա ես այսքան չէի մղկրտայ գրէյցէ:

IV

Եթէ հարկ լինէր տիեզերքը նկարագրել ամբողջութեամբ,
 Կառաջարկէի նախ ծանօթանալ անհատական ես—ի հետ.
 Ոչինչ այնքան բնորոշ չէ, որքան կեանքը մարդու մէջ
 Եւ որովհետեւ դու այդ բոլորի արտահայտիչն էիր՝
 Դորա համար էլ պաշտելի էիր, գրէյցէ:

Ահա այնտեղ թաւալուում է, լուութեան մէջ մի վիշապ
 նա մէկն է այն ճիշերից՝
 Որոնք ազմկում են տարածութիւնը սոսկալին ըմբռնելու
 համար.

Եւ եթէ մեր գոյութիւնը նոյնպիսի իմաստ ունի,
 Ապա ինչո՞ւ դու չբաւականացար քո բողոքներով:

Օրգանական կեանքում, ասում էիր միտքը վերածւած է
 Անհատական մասերի սեփական ինքնուրոյնութեան հետ,
 Եւ եթէ ես բնութեան լեզուն չեմ
 Ապա ինչո՞ւ եմ տիեզերքի վիշտը...

Տարօրինակ հակասութիւն իմ՝
 Եւ ապրող հոգիների մէջ, որի բարձրութեան՝
 Այնքան խանդաղատանքով դիմում էիր.
 Եւ եթէ ուզում ես, որ քեզից յետոյ
 Դեռ երկար շարունակեմ իմ գոյութիւնը,
 Տնւր ինձ ստեղծագործող աշխատանք գրէյցէ:

Կեանքի ամբողջութիւնը դիր իմ մէջ,
 Ու իմ ձեռքը տուր նրա խոհերի բանալին.
 Իսկ եթէ կըլտես իմ բանականութեան՝
 Ես ուզում եմ վշտի թերթիկներով մազել ժամանակի
 վրայ:

Յաղթած վեհութիւնը հեգնանք է
 Դեպի բռնակալի սուրբ.
 Եւ եթէ դու քաջութիւն ունես՝
 Թւել քու Աստծու առաջ իւր ոճիրները,
 Ապա աուր ինձ քու ձեռքը, իմ ընկեր:

V

Ազգակցական կապերից դատ՝
 Հոգիները ունին և մի ուրիշ առաւելութիւն.
 Եւ եթէ բացարձակն ու յարաբերականը ըմբռնելու համար
 Նրանք աւելի խոհեմ են գտնուում լռելու,
 Յայնժամ ել, և տես թէ ի՞նչպէս են լալիս ծաղիկները...

Խօսալու ժամանակ ես էլ չգիտեմ թէ ինչ եմ ասում
 Բայց երբ մտաբերում եմ այդ ըստին՝
 Ձգում եմ որ նա անդառնալի կերպով արդէն գնաց
 Գոյութեան իրաւունքներից դուրս կայ մի կատարելութիւն,
 Որի բարձրութեան՝
 Մարդկային հաւասարեցումն եմ պահանջել միշտ գրէյցէ:

Երազների ու մտահոգութիւնների մէջ կայ մի աշխարհ,
 Ուր վիշտը մի առանձին սրտմտութեամբ՝
 Լալիս է տիեզերական ցաւը.

Եւեթէ այդ բոլորը բանականութեան խախտումն առաջացնի
Յայնժամ խօ չէս ծաղրի իմ խենթութիւնները:

Անասելի մի ոյժ՝ հէնց անմեռ ժամանակի հետ,
Որ իւր անողորմ ճանկերով
Խնամակալութեան տակ է առել սողացող հոգիները.
Եւ եթէ գո՛ւ էլ կեանքն ես ամբաստանում՝
Ապա ո՛ւր որոնել տանջող անհատականութիւնը:

VI

Ինձանից դուրս, կեանքի մի խոնաւ անկիւնում
Իւր ցաւերի մէջ կծիկ-կծիկ գալարում է մէկը.
Աւելի ուժեղ ու բախտաւոր աչքերը նրան չեն նկատում
Ու հսկան, առաւապանքի անհունութեան մէջ՝
Մենակ լալիս է ներքին ու հոգեկան ցաւը
Մի՛թէ, երազած կատարելութիւնը մեռող ջիւ մէջ է
միայն...

Ու ամբոխը գրէյցէ, հոժ՝ ու յիմար.
Կարիքի գիտակցութիւնը դէմքին
Մտամոքսի համար միայն գլուխը ունի դրած,
Որի համար էլ, աւելի բարդ հարցերին՝
Վարպետօրէն մօտենալու գիտակցութիւնը չունի,
Ու այդ ճիճունների երամը
Մի՛թէ, իմացականութեան կատարելատիպն է ներկայա-
ցնում:



ՓԱԿԱԳԾԻ ՄԷՋ

Եւ շարան-շարան, կանգնեցին ինձ դէմ բռունցքամարտում
Երբ երգում էի վեհ նախնիքներիս հզօր երգերը,
Եւ երբ աշխատանքն թափում էր քրտինք իմ բոց ճակատից
Ու այդ սև ամբոխն հրճանքով տարւած՝
Հեզնեց իմ միտքը

Եւ ո՛վ արգելեց...

Պաշտամունք չկայ, և ոչ սրբութիւն
Երկրպագելու

Կայ միայն դաւեր,
Որին դիտելու՝ շարժէ կռանալ
Մինչև գետինը.

Պաշտիր ինքդ քեզ,
Եւ գնայ ուղիղ դեպի քո Աստուծուն
Դու ինքդ ես մարդը...

Բնւր էր կեանքի մէջ
Եւ ձմեռն այնտեղ՝ կատարեալ ընկեր
Բայց ես ներս մըտայ:

Եւ իմ շուրջն ամեն ամբոխը սառած,
Աչքերը անմիտ յառած ընութեան՝
Ապրուստ էր հայցում:

Գոյութիւն մուրող այդ ձևը ընկեր,
Ես վաղ եմ առել
Աւելին կուզեմ...

Եւ երբ կլինի անհատն ուժեղ,
 Անհատն ազատ ու անկախ
 Մարդը չի լինի մարդու համար
 Ինչպէս սողունն մտավախ:
 Որ վերանան նեղ, շովինիզմ,
 Համախմբումն ազգերի
 Ու երբ կեանքի ասեղ ծոցում
 Մարդը մենակ կը կանգնի:
 Կամ թէ չլինի իրար կապող
 Եւ ոչ մի թել աշխարհում,
 Որ տիրողներն այնպէս խրոխտ
 Թայլերին են դարբընում:
 Ու աղբակոյտ ստամոքսը,
 Եւ կիրքն ուժեղ կը հանգչե,
 Այն ժամանակ հոգիս ձեզ հետ
 Ոսկէ դարը կաւետի...

Մեծ էր հաւատըս...
 Ու չէի գիտում թէ ինչպէս տեսքով՝
 Կանգնած է դէմըս վայրենի մարդը,
 Զուրկ երազներէից ու հոգով ստոր
 Եւ գիտէ ծաղրել իմ մեծ մտքերը.
 Ու բերտ հրէշին այդ տխմար՝ հզօր,
 Ես բարեւ տըւի
 Եւ ինչո՞ւ չատել:

Անգիտակ ցաւին անդառն, և խորթ,
 Թաղել է գանգում կոշտացած մխարը,
 Եւ այն բաց սրտով երբ ողջոյն տըւի
 Նա մուրճը ցուցեց

Ինչո՞ւ չըլլեալ:

Անմիտ իւր կոչման և կեխտոտ, և հեղ,
 Այդ անարգ ճիճուն յաճախ դէպքերում
 Ոչխար է կտրում.
 Եւ զոհ կը քերին հոգով փոքրացած՝
 Զգիտէ պաշտել ազատն ու բարձրը
 Ու իւր իսկ ձեռքով իմ հալարտ խօսքին,
 Դաշոյն է ուղղում

Ինչո՞ւ չապտակել:

Եւ իմ անէծքը ուղղում եմ նրանց,
 Որոնք հմտութեամբ կեանքին տոն տըւին
 Ո՞ւր է երազած կեանքի բարձրութեան
 Հասած իմ մարդը,
 Որ թախծոտ հոգով տանջանքը պաշտէր
 Մեծ էր հաւատըս

Բայց ո՞վ այն լքեց...

Ես ատճում եմ ձեզ:
 Ատում՝ իմ հոգու ամբողջ թիւերով
 Բոլոր ուժգնութեամբ.
 Որ կեանքն ազմըկող այս տխուր պահուն՝

Երբ տարերային հսկայ թափերը
Իրար են բաղխում,

Գուր ձայն չէք հանում:

Գուր ձայն չհանեցիք երբ մահն էր իշխում,
Եւ ուր գմելին ճանկերում բռնած՝

Օգու՛մ ճախրում էր առելի ցինը
Փարախն էր ննջում օրւայ այդ ժամին
Եւ ուր մի փոքրիկ արթնութեան համար,
Փորւեցաւ գեանին մի խոր գերեզման

Ես ատճում եմ ձեզ:

Գուր ձայն չհանեցիք և այն ժամանակ,
Երբ կեանքի հպարտ յորձանքը պայթեց
Ու ազգերն առաջ ընդ նա վաղեցին
Մի տեղ միայն դեռ՝ վառւում էր սխը,
Որտեղ և ընկաւ իմ ժողովուրդը

Ես ատճում եմ ձեզ:

Օ՛, խօսքի մարդիք!

Լալկան թռչնի պէս

Ծուարած փոքրիկ ձեր պալատներում,

Մեզ գո՛վք երգեցիք.

Խարխուլ ու տգեղ մեր խրճիթներում՝

Ձեր ձայնը եկաւ մեզ սիրաշոյնեց,

Մենք քնած ընկանք

Ես ձեզ ատում եմ...

Նայում եմ հեռու ընկած գողգոթան
Ամբոխը ներքև ծփում է ուժգին,
Եւ ես այդ օրւայ ծաղրի առարկան
Հպարտ աանում եմ իմ կեանք, իմ խաչին:

Եւ քէն, և նախանձ մի կողմ թողնելով
Մօտենում եմ ես սրբազան փայտին,
Ու ներողամիտ բերկրալից ժպտով
Համաձայնում եմ ամբոխ քո վճռին:



Բարձրաթռիչ բաղէն, ինքնագոհ ժպտով
Ճախրեց ու նստեց լերան սրածայր,
Ձիւնոտ կառարին:

Ու հէզ ծիծաղը փայլեց քիմքի վրայ,
Երբ որ նկատեց իւր ստների տակ
Հսկա անդունդը:

Եւ բարձունքներին անսովոր՝ հպարտ,
Նա ուռած կրծքով այս երգը երգեց
—Այստեղ տիրում է սառնամանիքը...



Տատասկոտ կեանքի ուղին ասպարէզ
 Եւ կարիքն ընկեր, զոյութեան կուի
 Ինչ կոչ հրաւիրեց.
 Տանջանքի այդ մեծ մէյդանի միջին
 Ինչպէս կը տեսնես,
 Ընկեր, հալեցինք ձուլեցինք իրար
 Եւ կեանքը և ես:
 Ե՛ւ հպարտ յաղթուածն, ստոր, փոքրոգի
 Ընկեր, իւր նախկին խօսքը դրժելով,
 Տափակած գետի ալիքի նման
 Փրփրում է անցնում,
 Ատելի կեանքի նենգ պայմաններին
 Յարմարում, ասլո՛ւմ,
 Եւ փալաս դառնում.
 Վայ, վայ յաղթուածին...
 Ընկեր, ուժեղի օրէնքը որքան
 Եւ արգար լինի,
 Ատելի է նա.
 Պայքարի ժամին թունուոր կեանքի
 Անձամբ փորձեցի
 Վիթխարին յանկարծ—յարմարէք ասաց
 Իմ գոռոզ ես-ին
 Եւ բիւր հոգիներ ծնրաղիր իջած
 Փնփռ քեզ ասացին
 Եղան մի քանիս, արհամարեցին
 Կամքը երկնային,
 Եւ նրանց ընկեր, հնձեցին հէնց իմ
 Աչքիս առաջին:

ԻՄ ԵՐԳԻՆ

Սարերի դօշից սպապոտ լալան
 Քաղեւ ես կուգաս,
 Արցունքէ բնում կարապի երգը
 Երգել ես կուգաս.
 Է՛, ջիւան ախպէր թող գալըդ բարի
 Ախըը հէ՛ր եկար,
 Էս անկեանք երկրում, արեան աշխարհում
 Ինչո՛ւ լոյս ընկար.
 Չորս կողմդ կրակ, սեւուր թռչուն
 Ո՞րտեղ պիտ նստես,
 Ո՞ր կանգուն ծառի հաստարուն կրծքին
 Վաթան պիտ հիմնես.
 Քեզնից չուտ ախպէր, ագռաւը եկաւ
 Երեք փոթ ալու,
 Էն կանաչ ծառի սիրուն ճղներից
 Սև խորար բերաւ.
 Լեռներից փշեց սովալուկ քամին
 Ամեն ինչ տարաւ,
 Է, անփորձ ախպէր թող գալըդ բարի
 Լաւ օրի չեկար,
 Գլխիտ տեղ ունիս, էթէնց չեմ առում
 Ինձ ծուռ չհասկանաս,
 Իմ թոռուն ախպէր, մեր սուրբ վաթանից
 Ի՞նչ խաբար կուտաս.

Աշխարհը ա ընկեր, էսէնց էլ կլինի
 Կըզայ ու կանցնի,
 Իմ եթիմ ախպէր, ամա փիս մարդու
 Աչքը խափանւի.
 Մնացել ենք շվար, վիզներս ծռած
 Մէյդանում կայնած,
 Նորածին ախպէր, բերանիդ դուրբան
 Հէր ես տապ կացած.
 Սև օրի հասանք, սև տարի տեսանք
 Մեզ դանդ քաշեցին,
 Եարագան ախպէր, դեռ գարունն չեկած
 Ձմեռ երգեցին...

Յոգնած իւր բեռից, էս մութ ձորակով
 Քարան է անցնում,
 Իսկ նրանց գլխից գաղտնիքը շալկած
 Չարիքն է սողում,
 Վհատ օրերի թախիծը բռնած
 Վշտոտ գէմքերին,
 Կեանքի ցան այդպէս տանում են յանձնել
 Մեծ հեռուներին.
 Գրաստները նիհար, խորդ ու բորդ ճամփով
 Խեղճերն են գնում,
 Իսկ գիշերը լուռ, խաւար աչկունքով,
 Սարսափն է հսկում.

Անորոշն այդպէս միշտ պատահական
 Ճամփում է դրած,
 Եւ մարդը անտէր, կեանքը անապահով
 Դրսումն է թողած.
 Անգէտ կոչումին չի զգում ինչու
 Ապրուտ է հայցում,
 Իւր պէս շատերին մահի ճանկերից
 Խլել աշխատում.
 Եւ այդ գոռ պայքարն ատամը սրած
 Նայում է որսի,
 Թէ որ յիմարը գլուխը կորցրած
 Տիղմում կը կորչի...

Ճամբորդներ էինք, ու մեր շունչը բոց՝
 Եւ անյաղթ ընկեր,
 Գարունն յոյսերով

Ելանք ասպարէզ:

Ու մեր միտքն հօր ճախրում էր բարձրում
 Եւ խրոխտ քայլով
 Տանում մեզ կեանքի,

Կրկէսն ահաւոր:

Իսկ մեր շուրջն ամեն ամբոխը խուլ,
 Անմիտ պայքարին

Աչքերը յառած՝

Դիտում էր ցնծում.

Ու մենք յաղթեցինք...

Անյագ ու անվերջ բաղխում էր կուրծքս,
 Ու փոթորկալից դուռ ովկիանոսում՝
 Հեզնում իմ կեանքը:

Զայրոյթի անեղ ճնշման տակ ուժգին,
 Մարում էր հոգիս.
 Այնտեղ թաղում էր իմ անուշ հեքը
 Իմ սիրան էր պայթել:

Ու չոր ծիծաղով բարբարոս կեանքի՝
 Գոյութիւնը հեզնեց,
 Ոչինչ որ ապրի...



Եւ անա այնտեղ երկինքն է մթնած
 Ծովը հեալով զարկում է ավինն,
 Ու անփայլ աչերս հեռուն երկնցած
 Բաց որոշի մէջ վնասում է ուղին:

Եւ խոր ու զգայուն ես երազում եմ
 Մոայլ կեղևի տարածքին վերայ,
 Թէ անա կիջնի երկիրը դժխեմ
 Ուր մեծ արկածով յղի է յիմա:



Անճար մշուշում, թաղած խեղճերի՝ երգն եմ երգում
 ձեզ ուր ամբողջը կայ.

Սև մութ օրերի թախիծն է այնտեղ, որտեղ մեծ
 ցալը իւր որսն է արել, ու պրկել գեալին.

Մեռնող սրտերի երգն եմ երգում ձեզ, ուր ուժեղի
 մօտ կորացած թոյլը, չէ կարում հնչել իւր ձայնը յատակ.
 Եւ ինձ յուսադրող անորոշի հետ՝ տանջանքն է այն-
 տեղ դէպ անյգ եմ գնում:

Մեղ սեղ լիւնների շրւաքի նման այդ ճակատները,
 կեանք են թւել ինձ, ուր աղաղակող հակասութեան հետ՝
 չէ լուել բնաւ ձայնը ընկածի.

Եւ մի առանձին պաղարիւնութեամբ՝ ձգտում եմ
 անա դէպ այդ փոքրերը, որոնք մեծերի սուերներին մօտ՝
 աչքի չեն ընկնում.


Իւր թաց օրրանում, լուռ մխող սրտի, վիշտն եմ եր-
 գում ես. և թող չկարծեն այդ խենթ խեղճերը, որ մոռա-
 ցած են իմ սրտի առաջ, որ նրանց ձայնը մեռնում է ան-
 հետ առանց յուզմունքի, և յաւերժութեան ցատումը բնաւ՝
 չէ խօսում այնտեղ.

Այդ սև զոհերի, խեղճ հոգիների, արցունքն է իմ մէջ.

Կը լամ ու կերգեմ քանի ուժ ունիմ, մի խճօքն է
 մնում.

Ու տառապանքի անհունութեան հետ՝ տանջանքն
 է իմ մէջ, ես եմ ձեր երգը...






Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Յ Ա Ն Կ

1. Կոհակահրդ	9—22
2. Յոյգեր ու տենչեր	23—34
3. Թախիծ	35—53
4. Գիւղական կեանք	55—71
5. Մահւան սիմպտոմներ	73—84
6. Տիեզերական վիշտ	85—96
7. Փակազծի մէջ	97—109



« Ազգային գրադարան



NL0360239

51705

